№ 61 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 21 № 61

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարտի 19-ին վախճանվեց

ԲԱՐԻՍԱ ԱԼԷՔՍԷԵՒՆԱ ԱԴԱՄՕՎԱՆ,

որի մասին յայտնում են ազգականներին և ծանօթներին հանգուցեալի որդիք՝ Նակօվ Խրիստափորովիչ և Արշակ Խրիստափորովիչ Ադամօֆները: Հոգեհանգիստը տեղի կունենայ մարտի 21-ին, երեկոյեան ժամի 7-ին: Յուղարկաւորութիւնը մարտի 22-ին, առաւօտեան ժամի 10-ին իր բնակարանից (Գոլովինսկի պրօսպ. տուն Ալէքսովի № 30) դէպի Մուղնու եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

(չ. հ.) 1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

„ՄՈՒՐՃ“

Գրական, հասարակական և քաղաքական ԱՄՍԱԳԻՐ

(Նոր շրջան VII տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Ռուսաստանի և Պարսկաստանի համար՝ տարեկան 10 ր., կէս տարին 6 ր., ամսական 90 կ. Արտասահմանի համար՝ տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր. (18 ֆ.), ամսական 3 ֆ

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս (5—5 ր.). երկրորդ վճարը լինում մայիսին: Տարր. դպրոցներում ուսուցանողների, աշակերտների, ուսանողների, գիւղացիների և բանւորների համար բաժանորդագինն է (Ռուսաստ.) 8 րուբլի տարեկան, որ կարելի է վճարել մաս-մաս (4—4 ր.):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է

Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց, տ. № 12) և «Գուտտենբերգ» գրախան. (Երևան. հրապ.) և «Новая Рѣчь» գրախան. (Գոլովինսկի պրօսպ. Թատր. դիմաց):

Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала «МУРЧЪ»:

Արտասահմանից՝ Tiflis, Rèdactio de la revue «MURTCH».

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ընդունվում է ամէն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարւում են.—1 երես բոլոր յայտարարութեան համար 10 ր., $^1/_2$ եր. 5 ր., $^1/_4$ եր. 2 ր., տողատեղ (կօրպուս) 40 կ.:

15—0 Խմբագիր՝ Լևոն Սարգսեան

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ՅՈՒՇԱՐԱՐ“

Թատերական-գրական-գեղարուեստական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Թերթիս աշխատակցելու են հայ գրական-գեղարուեստական աշխարհի բոլոր յայտնի ներկայացուցիչները: Թերթի նպատակն է ծանօթացնել և տարածել գեղարուեստի գաղափարը հասարակութեան զանազան խաւերում, օժանդակել նրա ճշտիւ ըմբռնմանը և ամեն կերպ նպաստել զաւառական բեմերի զարգացման: Այս տարի տալու է 18 համար բազմաթիւ պատկերներով և 9 հատ ընտիր պիեսներ, որոնց, առանց դժուարութեան, ամեն տեղ կարելի է ներկայացնել: Տարեկան բաժանեգինն է 5 ր., արտասահման 6 ր. կամ 3 դոլլար: Բաժնեգինը կարելի է վճարել մաս առ մաս. սկզբից 3 ր. և ապա իւրաքանչիւր ամսի սկզբին մի րուբլի մինչև մայիս: Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է 1) «Գուտտենբերգ» գրավաճառանոցում, 2) «Փարոս» քեօսկում, 3) խմբագրատանը, Սերգիեվսկայա № 3, ուր դիմելու են օտար քաղաքացիք:

Խմբագիր-հրատարակիչ՝ օր. Մարիամ Մելքոնեան

տա. 7—25

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ԲՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ց. Վ. ՉՈՒԴՆՈՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՖԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. չոր. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուէ, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Ա. Տ. ՐՕԶՄԱՐԻՆՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.:

ԵՐՄՕԼԱԵՎ.—Երեխայոց ամեն օր 12—1 ժ.

ԿՈՒՑԵՎ.—Ջղային, երեքշ., հինգշ. շաբ. 12—1 ժ.

ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 12—1 ժ.

ՊԱՎԼՕՑԿԻԵ.—Վիրաբուժ. ամեն օր 12—1 ժ.

ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ., հինգշ., շաբ., 4—5 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., ուրբ., 12—1 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻԿՕՎ.—Կանանց, երեխ., ամեն օր, բացի կիր. օրերից 1—2 ժ.

Բժ. Զ. Ց. ՆԵՎՋՕՐՕՎ.—Առամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ, Բժ. Կ. Ի. ՉՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլէկտր. 4—6 ժամ.

Մ. Ե. ԴՕՐՕԲԵՑՎԱ.—Մասսաժ. ամեն օր 11—5 ժ.

Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՎՍԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժ. Կ Դ. ԴՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին հիւանդ. ամեն օր 1—2 ժամը:

Բժ. Ա. Ա. ՄՕՆՍԷ.—Երեխ., երեքշ, հինգշ. շաբ. 4—5 ժամը:

ԵՐՄՕԼԱԵՎ.—Ներք. երեխ. ամեն օր 11—12 ժ.:

ԿՈՒՑԵՎ.—Ջղային. երեքշ. հինգշ. կիր. 12—1 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան:

առ. (չ. ու.) 83—144

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների:

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.: Սօլոլակ, Բեհբութեան փող. № 33:

(ա. օ.) առ. 23—100

ԲԺԻՇԿ

Գ. Պապովեան

ՄԱՍՆԱԳԷՏ

քթի, կոկորդի և ականջի հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—3 ժ. ամեն օր բա- / երեկ. 5—7 ժ. ցի ուրբաթ

Միխայլովսկի պրօսպ., տ. Ֆօրբերի № 11.

(կ. չ.) առ. 29—60

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսախանեան

ՄԱՍՆԱԳԷՏ

ներքին և վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սօլոլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը:

առ. (չ.ու.չ.) 54—100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարենորոգման խնդիրը. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Պետական Դումա. Գ. Բ. Իօլլօս. Մամուլ. Տեղեկատու Զանգեզուրի. Օսմանեան սահմանադրական միութիւնը. Պետական Դումայի շուրջը. Պէտ է զգոյշ լինել. Պատճառաբանութիւն. Շուշու Զուլհակութեան դպրոցը. Նամակ Դանձակից. Տեղեկութիւններ գաւառից. Ներսէսեան դպրոցի մանկավարժական-մասնագիտական դասերանի դրութիւնը. Ալէքսանդրօպոլի «աշխարհի վերջը». Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐ

I

Մեր երկրի զանազան կողմերից ստացվող տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գիւղական ազգաբնակութեան առաջադէմ տարրերի մէջ մեծանում է հետաքրքրութիւնը դէպի տնտեսական բարւոքումները:

Գիւղացին սկսել է ըմբռնել, որ նա պէտք է բարւոքէ իր արհեստը, որպէսզի կարող լինի իր դիրքը չը կորցնել գոյութեան կռւի մէջ:

Այնտեղ, ուր գիւղը առատ հող ունի, կամ գիւղացիները կարող են մերձակայ պետական կամ կալուածական հողերից օգտվել, մարդիկ դեռ ուժգին դրդումներ չեն զգում իրանց արհեստը կատարելագործելու, որովհետև նրանք յոյս ունեն հողի ընդարձակ տարածութեան վրա: Թող, մտածում են նրանք, իւրաքանչիւր օրավար հողը տայ մի փոքր արդիւնք, բայց ընդհանուր հաշւում կը գոյանայ բաւական խոշոր գումար, որով հնարաւոր կը լինի գոհացնել տան պէտքերը:

II

Անշուշտ, այնտեղ, ուր հնարաւոր է տնտեսութիւնը առաջ տանել ընդարձակ հողի վրա, պէտք է աշխատել այդ հողերը դնել գիւղացու տրամադրութեան տակ: Բայց մենք գիտենք, որ մեր երկրում շատ կան և այնպիսի տեղեր, ուր գիւղացին զրկված է հողի կողմից իր գիւղում և չունի մօտակայքում ազատ հողեր, որոնցից նա կարողանայ շահվել:

Ի՞նչ անէ գիւղացին այդպիսի հանգամանքներում:

Նա կամ պէտք է գաղթի այնպիսի տեղեր, ուր ազատ հողեր կան, կամ պէտք է մշակութեամբ լրացնէ իր տան եկամուտի պակասորդները և կամ պէտք է ուշադրութիւն դարձնէ բարձրացնելու իր տնտեսութեան արդիւնագործութիւնը և նոյն հողից ստանալու աւելի արդիւնք, քան մինչև այդ նա ստանում է եղել:

Եւ գործնական կեանքը հարցի այդպիսի լուծումների դէպքեր դրել է մեր առաջ, սակայն գիւղացին ամենից շուտ դիմել է մինչև այժմ մշակութեան, քան մեր յիշած միւս միջոցներին:

III

Հասկանալի է, որ մօտ ապագայում գիւղացու համար կենսոտ հարցի լուծումը աւելի ու աւելի է դառնալու սուր-պագական, որովհետև ազգաբնակութիւնը աճում է և ապառողների թիւը աւելանում և նոյնիսկ գիւղացու պահանջները օրից օր բազմանում են ու բարդանում:

Եւ անկասկած՝ գիւղացու համար, որ ցանկանում է կարելին չափ անկախ ու ազատ հողագործ լինել, առանձին նշանակութիւն պէտք է ստանայ իր գիւղական արդիւնաբերութեան բարւոքման հարցը:

Բարւոքել արդիւնագործութիւնը, բարձրացնել գիւղատնտեսութեան եկամուտները, մտցնել կատարելագործութիւն արհեստի մէջ—դրանք այն հարցերն են, որոնք հերթական են դարձել գիւղացիների համար մի քանի տեղերում, իսկ մի քանի ժամանակից յետոյ պէտք է անհրաժեշտութիւն ճանաչվեն մեր ամբողջ գիւղացիութեան կողմից:

IV

Պէտք է օգնել գիւղացուն այդ գործում: Եւ նրա համար անհրաժեշտ է գործադրել բոլոր այն միջոցները, որոնք կարող են նպատակին ծառայել:

Կենդանի օրինակները և ղեկավարող անձերի գոյութիւնը, անշուշտ, կարող են մեծ դեր կատարել այդտեղ: Ուստի մի կողմից օրինակելի տնտեսութիւններ հիմնելը և փորձնական դաստակերտներ հաստատելը, միւս կողմից դպրոցներին կից ագարակներ բանալը, խնամակալների կամ ղեկավարների խմբեր ուղարկելը և զանազան ընկերակցութիւններ կազմելը պէտք է ճանաչվեն անհրաժեշտ միջոցներ մեր գիւղական շրջանում գործելու համար:

Այդ ուղղութեամբ մի փոքր գործ կատարված կայ մեր երկրում. բայց նա չափազանց դեռ փոքր է բաղձալի հետևանքներ առաջացնելու համար:

Մենք առիթ կունենանք խօսելու թէ եղած փորձերի և թէ իրագործութեան համար ցանկալի ծրագիրների ու ձեռնարկութիւնների մասին:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարսից Շահը ուղարկել է հայոց Կաթողիկոսին հետևեալ նամակը.

Առ Ն. Ս. Օծութիւն.

Հրեշտակակամեան Առաջնորդապետին քրիստոնէից, Դերագոյնը հոգևորականների և Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս ամենայն հայոց երկրագնդիս.

Ս. Էջմիածին

Աստուածային շնորհները Ձեզ նախաշաւիղ մաղթելով՝ յատկապէս Ն. Ս. Օծութեան ուղիութիւնը կը հարցնեմ և յայտ կանեմ թէ՝ Նորին Վեհափառութեանդ [illegible] վեհափառութեամբ սրբատառ կոնդակը, յորում ծանուցած էր Եզնիկ արքեպիսկոպոսի (Ապահունի) առաջնորդութեան ընտրութիւնը և հաստատութիւնը ի սոյն պաշտօն, իբրև առաջնորդ Ատրպատականի ընդհանուր հայոց, ստացանք:

Որովհետև մեր արքայական բուն նպատակն է, որ Իրանի պետութեան հովանու ներքոյ գտնվող բոլոր ազգաբնակութիւնները անխտիր հանգիստ ու անդորր լինեն, վասնորոյ հրամայեցինք Ատրպատականի բոլոր դիւանների պաշտօնեաներին, որ Նորին գերապատուութիւն Եզնիկ արքեպիսկոպոսին ճանաչեն իբրև առաջնորդ այդ երկրին և հայ ազգի հոգևոր գործերը վերոյիշեալ արքեպիսկոպոսին յանձնելով՝ աշխատեն ու աջակցեն նրա նպատակների և արդար պահանջների իրագործման:

Կը խնդրեմ, որ Ն. Ս. Օծութիւնը իր աղօթքի ժամանակ մեզ չը մոռանայ:

(Ստորագրած և կնքած)

Մէհէմեդ-Ալի Շահ

յԱրքայական պալատ, ի Թէհրան.

1324, զիլղեաէ ամսի 29

Գրվեց այս մեր Թագաւորութեան Ա. ամին:

—

Ֆրանսիական «Le Temps» կիսապաշտօնական լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է Կ. Պօլսից (Սօֆիայի ճանապարհով) հետևեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնները՝ մարտի 10/23-ից.

Երզրումի վալին տեղեկացրել է Բ. Դրան, որ նա ձեռք է անցրել Կովկասի հայ յեղափոխական կոմիտէտների՝ համիդիյէ քիւրդերի գլխաւորներին ուղղած թղթակցութիւնը, որի մէջ յորդորում են քիւրդ գլխաւորներին միանալ իրանց հետ՝ թիւրքական լուծը թօթափելու և մի անկախ պետութիւն կազմելու համար: Այս լուրը մեծ անհանգստութիւն է պատճառել սուլթանի պալատին, որտեղ երկիւղ են կրում, թէ մի գուցէ 4-րդ բանակի հրամանատար Զէքի փաշան իր միտքը փոխէ: Զէքի փաշային, որից կախում ունեն համիդիյական քիւրդերը, «Քիւրդիստանի թագաւոր» կոչումն են տալիս:

Երզրումից ստացված վերջին լուրերը հաղորդում են, որ կուսակալը յայտնել է մահմեդականներին, թէ սուլթանը բաշխել է նրանց՝ վերջին 2 տարվայ անձնական տուրքի չը վճարված մնացորդը և ներել է տուրքը մերժելու նկատմամբ ժողովուրդը գրգռողներին. այս առիթով կուսակալը յորդոր է կարդացել ժողովրդին, որ նա իբրև պատասխան այս կայսերական շնորհներին, վճարէ այս տարվայ տուրքը: Բայց ժողովուրդը՝ վկայելով հանդերձ, թէ ինքը հաւատարիմ է սուլթանին, այնուամենայնիւ բացարձակապէս մերժել է տուրքը վճարել, պատճառ բերելով իր աղքատութիւնը և յայտնել է, թէ յանձն է առնում կրել ամեն պատիժ, բայց չէ վճարելու:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

—

ՎԻԱՏԿԱ, 19 մարտի: Տեղիս ժողովրդական միապետական կուսակցութիւնը դիմել է հեռագրով Պետական Դումայի նախագահին, որով բողոքում է Դումայի անդամներից մի քանիսի վարմունքի դէմ, որոնք նստել են Դումային ուղղված ողջոյնի հեռագիրները կարդալու և Դումայի բացման օրը կատարած ազգային օրհներգը երգած ժամանակ: Հեռագրի մէջ խնդրվում է բողոքել յիշատակված կուսակցութեան դէմ Դումայի առաջիկայ նիստերից մէկում:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի: Նիստը բացվում է ժամը 11 և 11 րոպէին, Գոլովինի նախագահութեամբ: Լսելով վերջին օրերս կառավարութեան մտցրած մի շարք օրինագծերի ցուցակը, Դուման անցնում է ագրարային հարցին վերաբերվող օրինագծերի հիմնական կէտերի քննութեան:

Մինիստրների օթեակում երևում է երկրագործութեան և հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը:

Առաջինը խօսում է իշխան Սվեատապոլկ-Միրսկին, որը յայտնում է, որ ինչ որ նա ասելու է, ոչ թէ կուսակցական, այլ սոսկ անձնական հայեացքներ են լինելու: Նախնական համայնքում նա տեսնում է առաջադիմութեան մի անպէտ արգելառիթ: Արևմտեան Եւրոպայի օրինակով ապացուցանում է, որ անհրաժեշտ է անցնել առաջադիմական—անհատական հողային սեփականութեան. անպէտք պալիատիւ միջոց է համարում ընդլայնել գիւղացիական հողատիրութեան շրջանը. միակ ելակէտ համարում է գիւղացիներին զանազան տեղեր բնակեցնել և պահպանել մասնաւոր հողատէրերին, իբրև կուլտուրայի կրողներ, նախաձեռնութեան և տնտեսական ինքնագործունէութեան ոգի: (Աջակողմը ծափահարում է, ձախակողմից մասնակի ձայներ՝ «բաւական է». կենտրոնում տիրում է լռութիւն:) Իր տեղն է գրաւում մինիստրների խորհրդի նախագահը:

Կառավայեվը, յենվելով բազմաթիւ ստատիստիքական փաստաթղթերի վրա, մատնանշում է, որ գիւղական իւրաքանչիւր ընտանիքի՝ հողագործութիւնից և առանձին զբաղմունքներից ստացած տարեկան միջին եկամուտի, ընդամենը 38 րուբլու, բնական հետևանք հանդիսանում է Ռուսաստանի ազգաբնակութեան հիւանդութիւնը, մահացութիւնը և այլասերումը: Այդ բանի ցայտուն ապացոյց հանդիսանում են ագրարային անկարգութիւնները, որովհետև գիւղացու ստամոքսը—գլխաւոր կրամոլա է. գիւղացիները ասում են. «Մենք աղքատ ենք, որովհետև տգէտ և իրաւազուրկ ենք և մինչև գլուխներս խրված ենք հարկերի մէջ»: Գիւղացիական տնտեսութեան արտադրութեան մեծանալը կախված է միջոցներից, գիտութիւնից և ինքնագործունէութիւնից: Կառավարութիւնը միշտ անտես է արել գիւղացիական տնտեսութեան ներքին բարգաւաճման այդ աղբիւրները, իր քաղաքականութիւնը ուղղելով կառավարող դասակարգերի շահերի պաշտպանութեան համար: Միայն վերջին 11 ամսվայ ընթացքում կառավարութիւնը եռանդուն և փութաջան գործունէութիւն երևան հանեց ագրարային օրէնսդրութեան գործում, սակայն կառավարութեան այդ գործունէութիւնը նպատակին չէ համում: Շինական տնտեսութեան արտադրութիւնը ընդարձակելու համար բայց և այնպէս անհրաժեշտ է հողի որոշ minimum, որի մասին առայժմ չէ կարելի խօսել: Ռուսական նահանգներից շատերում գիւղացիական հողատիրութեան միջին նորման 5 դեսեատինից չէ անցնում: Միակ ելակէտ—ընդարձակել գիւղացիական հողից օգտվելու տարածութիւնը, դրան կարելի է հասնել միայն երկու ճանապարհներով—գաղթեցնելով և գիւղացիներին մասնաւոր սեփականատէրերի հողերը տալով: Գաղթեցնելը խախտում է տեղական ազգաբնակութեան շահերը և ցանկալի հետևանքներ չէ տալիս բաւականաչափ ազատ հողեր չը լինելու պատճառով: Միայն, միմիայն մասնաւոր սեփականութեան հողերը գիւղացիներին յանձնելը կը տայ և՛ պահանջվող նորման, և գիւղական տնտեսութեան արտադրութեան մեծացնելը: Ոչ այդպիսի նպատակների է ձգտում կառավարութիւնը: Նրա վերջին օրէնսդրական ակտերը հետևանքում աւելի և աւելի հողազրկում են գիւղացիութիւնը և ստեղծում են հարուստ գիւղացիներից մանր հողային սեփականատէրերի և շինական բուրժուազիայի նոր դասակարգ: Շինական բուրժուազիայի դասակարգում կառավարութիւնը արդարացի կերպով տեսնում է ըեակցիայի ամենալաւագոյն յենարանը, և այդ դասակարգը ստեղծել—կառավարութեան ագրարային օրինագծի իսկական միտքն է կազմում: Սակայն կառավարութիւնը մոռանում է, որ շինական բուրժուայի կողքին բուսնում է կառավարութեան համար վտանգաւոր, շինական պրօլետարիատի նոր հզօր դասակարգը: Աշխատաւոր խմբակը, ագրարային օրինագծի իր մշակած հիմնական կէտերում, ասպարէզ է գալիս նոր ուղղութեամբ ագրարային քաղաքականութեան նկատմամբ—«աշխատիր և կեր»:

Ծերեթելին Եկատերինայի և Պաւլ I-ի թագաւորութեան պատմական տեղեկութիւններով ապացուցանում է, որ ռուս ստորճանաւոր հասկացողութիւնը—հողային հասկացողութիւն է: Պետական շահերը խոշոր կալուածատէրերի շահերն են, որոնք կառավարութեան հետ միացած են խնամութեան արիւնակցական կապերով: Այստեղից է և մասնաւոր սեփականութեան սրբազան անձեռնմխելի իրաւունքը: Այդ պետականութիւնը Ռուսաստանը հասցրեց Մուկդէնին և Ցուսիմին: (Աջակողմը ձայնում է. «և այն գրութեան՝ որ հայերը ընկան ռուսական պարլամենտը»:)

Ծերեթելի.—Դժբախտաբար դուք սխալվում էք այդ [illegible]ում, ինչպէս և շատ բաներում. ես վրացի եմ: Մօտեցող խնդիրն է—ստեղծել նոր պետականութիւն և կործանել հողատէր կալուածատէրերի սրբազան իրաւունքը: Այդ խնդիրը կիրագործվի ժողովրդական ույժերով: Համապատասխան սրան, սօցիալ-դեմօկրատիական ֆրակցիան Դումայի նախագահին յանձնեց ագրարային օրինագծի հիմնական կէտերը:

Կուտլերը նկատում է, որ աշխատաւոր խմբակի նախագիծը չէ դիւրացնում գիւղացիներին յատկացվելիք հողամասերը աւելացնելու հասարակ և պարզ գործը, որին միայն կարելի է միանալ և ձգտել վերաստեղծելու հողային իրաւական կարգերը: Հակաճառում է հողի ժողովրդականացման դէմ, մատնանշելով, որ ժողովրդականացման անկարողութիւնը, երևի, ըմբռնում էին և աշխատաւորների նախագծի հեղինակները, պահպանելով աշխատաւոր չափից պակաս հողամասերը և ի նկատի առնելով այն հանգամանքը, որ ժողովուրդը ներկայ տէրերին է վերապահում օրինական իրաւունքը: Գիւղացիներին ուղղակի օգնութիւն հասցնելու գործը ինքնըստինքեան այնքան մեծ է, որ ոչ մի իրաւունք չունի նրան բարդացնելու այնպէսի երկրորդական բարենորոգումներով, որոնք կարող էին ագրարական հարցը դարձնել ցնորական մի բան: Գիւղացիների գործածութեան հողերի ծաւալը աւելացնելու անհրաժեշտութիւնը ընդունում է նոյն իսկ ինքը կառավարութիւնը, թէև նրա օրինագծերը չեն հասցնում նպատակին, բայց ժամանակ է, որ [illegible] խորթ մօրից դառնայ իսկական մայր: Ընդունելով մասնաւոր սեփականութեան՝ հողերի գրաւելու անհրաժեշտութիւնը, սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնը չէ խախտում մասնաւոր սեփականութեան իրաւունքները, որովհետև գրաւումը կատարվելու է ոչ թէ ձրի, այլ, օրինակ, իւրաքանչիւր դեսեատինի համար վճարվելու է 90 րուբլի, որին պէտք է մասնակցեն թէ կառավարութիւնը և թէ գիւղացիները: Այնուհետև Կուտլերը չեշտում է, որ աշխատաւորները ընդունում են, որպէսզի հողաբաժիններ տրվեն բոլոր ցանկացողներին, մինչդեռ սահմանադիր-ռամկավարները առաջարկում են տալ միայն գիւղացիներին և հողատէրերին: Աշխատաւորները ծրագրում են հողը տալ ժամանակաւորապէս օգտվելու, իսկ սահմանադիր-ռամկավարները ընդմիշտ տիրապետելու իրաւունքով. և վերջացնում է իր ճառը՝ իր կուսակցութեան անունից խնդրելով չը ձգձգել վիճաբանութիւնները, այլ խօսել ըստ էութեան և շտապել յանձնելու հարցը ագրարական մասնաժողովին: Ագրարական մասնաժողովի գործունէութեամբ սկսվում են արդէն Դումայի իսկական աշխատանքները ագրարական հարցի վերաբերմամբ: (Կենտրոնը ծափահարում է):

Դրմօվսկին խօսում է Լեհական Թագաւորութեան, հարաւային և հիւսիս-արևմտեան երկրի անունից, յայտնելով, որ Ռուսաստանում ագրարային հարցը միատեսակ չէ ամբողջ կայսրութեան համար, այլ կան այնքան տեսակ ագրարական հարցեր, որքան որ կան պետութեան մէջ առանձնայատուկ շրջաններ, որոնք տարբերվում են իրանց պատմական անցեալով և տեղական առանձնայատկութիւններով: Ռուսական նահանգների վերաբերմամբ միանալով սահմանադիր-ռամկավարների առաջարկած ագրարական ծրագրին և անհրաժեշտ համարելով Լեհական Թագաւորութեան համար առանձին կերպով լուծելու հարցը, ճառախօսը յայտնում է, որ նախ քան որ և է սօցիալական բարեփոխութիւններ մտցնելը անհրաժեշտ է վերացնել իրաւական սահմանափակումները, թէ դաւանաբանական և թէ ազգային, ստեղծել տեղական նոր ինքնավարութիւններ և օրէնքի ու նրա գործադրութեան մէջ ճիշտ համերաշխութիւն մտցնել: Իբրև ապացոյց Դրմօվսկին սկսում է մանրամասն կերպով խօսել Լեհական Թագաւորութեան գործերի մասին դպրոցական գործում:

Պուրիշկեվիչ (նստած տեղից).—Ի՞նչ կապ ունի դա ագրարական հարցի հետ:

Նախագահը.—Ճառախօսին ընդհատելու իրաւունքը պատկանում է Դումայի նախագահին, այլ ոչ ձեզ:

Պուրիշկեվիչ.—Ապա ուրեմն ինչու չէք ընդհատում:

Դրմօվսկի (Պուրիշկեվիչին).—Իսկ դուք համբերութիւն չունէք:

Պուրիշկեվիչ.—Ի հարկէ:

Դրմօվսկի.—Իսկ մենք 40 տարվայ ընթացքում սովորել ենք համբերել նահատակող իսկական-ռուս մարդկանց ազդեցութեան տակ, և վերջացնում է իր ճառը՝ յայտնելով, որ ագրարական հարցը Լեհական Թագաւորութեան մէջ կարող է լուծում ստա-

նալ միայն լեհական աւտօնոմ սէյմում նրա և ռուս կառավարութեան յարաբերութեան սահմանները նախապէս որոշելուց յետոյ, իսկ Ֆինլանդիում և հարաւ-արեւմտեան երկրում իր տեղական հաստատութիւնների մէջ։

Ժամի 2-ին և 15 րոպէին ընդմիջում է յայտարարւում։

Նիստը վերսկսվում է ժամի 3 և 16 րոպէին։

Շիդլօվսկին պահանջում է, որպէսզի մասնաժողովի մէջ առանձին ներկայացուցիչ ունենան և անկուսակցականները և որ մասնաժողովի կազմը բաղկանայ բացառապէս հողի մարդկանցից և հողատէրերից, այլ ոչ այնպիսիններից, որոնք ծախել ու վաճառել են իրանց ստացուածքները, անջատվել հողից և որոնց համար Ռուսաստանի շահերը ոչ մի արժէք չունեն։

Նախագահ.—Այստեղ այդպիսի մարդիկ չը կան։

Շիդլօվսկին շնորհակալութիւն է յայտնում նախագահին, որ նա ապացուցեց թէ Դումայում չը կայ ոչ մի այնպիսի մարդ, որ ցանկութիւն ունենար անջրպետ դնել հողատէրերի և երկրագործների միջև, և առաջարկում է ընտրել մի մասնաժողով 95 հոգուց բաղկացած, առանց շօշափելու ագրարական հարցը ըստ էութեան։

Երկրագործութեան մինիստր Իշ. Վասիլչիկօվ.—Կառավարութիւնը չէ կարող չողջունել Դումայի մէջ, ըստ երևոյթին, կայացած համաձայնութիւնը՝ ագրարական հարցի վերաբերմամբ առաջարկված օրինագծերը մանրակրկիտ քննութեան ենթարկելու համար յատուկ ագրարական մասնաժողով կազմելու մասին։ Ներկայ դէպքում կառավարութիւնը չէ կարող չը յայտնել իր կարծիքը ըստ էութեան այն խնդիրների ու առաջարկութիւնների մասին, որոնք առաջադրված են Դումայի անդամների անունից և մտադիր է այդ առիթով յայտնել իր կարծիքը այն կարգով, որը սահմանված է Դումայի կանօնադրութեան 56-րդ յօդուածի համաձայն։

Սակայն, պարոնայք, կանգնելով այս ամբիոնում, ես չեմ կարող մի քանի խօսք չասել ընդհանուր քննութեան այն կարգի մասին, որով այսօր քննադատւում է ագրարային հարցը։ Բոլոր հասկանալի պատճառներով ոչ ոքի այնպէս յատուկ չէ այդ հարցի շուտափոյթ և լիակատար լուծումը, որքան կառավարութիւնը կազմող անձանց, և ոչ ոք միևնոյն ժամանակ չէ գիտակցում, որ այդ հարցը չէ կարող լուծվել որևէ հրովարտակ կամ ուկազ հրատարակելով և նոյն իսկ հայիւ թէ կարող լինի լուծվել լայն չափերով ստացված ագրարային բարենորոգման իրականացմամբ։ Հարկաւոր է սիստեմատիքական և հաւասարաչափ օրէնսդրական գործունէութիւն. հարկաւոր է ժամանակ՝ այս հիւանդոտ հարցը պարզելու համար։ Հարկաւոր չէ դիմել պերճախօսութեան—ոչ թէ խօսքեր, սին ու դատարկ, այլ թւանշաններ, փաստեր և իրականութիւն։ Ընդսմին չէ կարելի երկիւղ չը տածել, որ բոլոր այն յոյսերը, որոնք շատ բաներով շաղկապվում են բարենորոգման իրականացման հետ, թւանշանների հետ յարակցելու ժամանակ, չեն կարող լիակատար իրագործելու շանսեր ունենալ։ Այդ ուղղութեամբ, ինչ որ կարելի է և ինչ որ հարկաւոր է անել, ... է ըստ ենթակայ վարչութիւնը վաղուց արդէն, և մեր ընդունած բոլոր հետևանքները, բոլոր համոզմունքները մտած են ձեր քննութեան յանձնած օրէնսդրական օրինագծերի մէջ։ Նրանցով մենք ղեկավարվեցինք այն ձեռնարկութիւններում, որոնց մինչև օրս ընդունում էինք։ Այդ բոլորը այժմ կենթարկվէ ձեր քննադատութեան։ Հէնց մեր այդ ձեռնարկութիւնների և նախագծերի կարգով դուք կը տեսնէք, որ այն մի շարք միջոցները, որոնց մենք առաջարկում ենք հողային հարցը լուծելու համար, բնաւ նպատակ չեն, այլ հանդիսանում են սոսկ միջոցներ։ Մենք կարծում ենք, որ կեանքի և աշխատանքի նորմալ պայմանները Ռուսաստանի ազգաբնակութեան գերակշռող մասսայի, այսինքն գիւղացիութեան համար—կը հասնեն այն ժամանակ, երբ գիւղատնտեսական առարկային կը յատկացվի նրան համապատասխան տեղ երկրագործական երկրի մէջ։ Այն ժամանակ, երբ դա իրականանայ, ես կարծում եմ կը գայ նոր դարագլուխ մեր պետութեան գոյութեան մէջ, ինչպէս և նոր տարեշրջան գիւղացիական գոյութեան մէջ։ Կը դադարի աղքատութիւնը, կը գայ բարեկեցութեան ժամանակը։ Այն միջոցների շարքում, որոնցով մենք աշխատեցինք ստեղծել այդ դրութեան — գիւղացիական հողատիրութեան պայմանների որակային և քանակային բարելաւման տրվում է առաջնակարգ տեղ։ Եւ այն միջոցների շարքում, որոնցով այդ խնդրի լուծման մենք ձգտում ենք, դուք կը տեսնէք, որ մենք լիովին գիտակցաբար ենք վերաբերվում դէպի այն անխուսափելի ընդհարումները, որոնք պէտք է որ տեղի ունենան մասնաւոր անձանց, խմբակների և դասերի շահերի միջև։ Մենք գիտակցում ենք, որ պարտաւոր ենք պաշտպանել այն սահմանների անձեռնմխելիութիւնը, որոնց հետ այդ շահերը բաղխվում են։ Բայց միևնոյն ժամանակ մենք գիտակցում ենք մեր պարտականութիւնը—այդ պաշտպանութիւնը հասցնել այն աստիճանի, ինչ աստիճանի որ ուրուագծած սահմանները համակերպվում են սեփական շահերի հետ։ Այնտեղ, ուր այդ սահմանները այդ շահերի հետ չեն յարակցվում, նրանք պէտք է առաջ մղվեն այդ սկզբունքը իրականացնելու։

Դուք, բարելաւման տեսակէտից, գիւղացիական հողից օգտվելու ձևեր կը տեսնէք և այն նախագծում, որը մենք պատիւ ունենք ներկայացնել ձեր եզրափակման։ Կանգնելով այդ հողի վրա, որոշ դէպքերում թոյլատրելով սահմանների ստիպողական ընդարձակումն, մենք կարծում ենք, որ մենք չենք խրերի սեփականութեան մնացած բոլոր հիմնական սկզբունքները, որոնց այսօր այստեղ արդարացի կերպով սրբազան անուանեցին։ Մենք կարծում ենք, որ այդ բացառութիւնները յատուկ են միայն ամրապնդել հիմնական կանօնները։ Կանգնելով այդ հայեցակէտի վրա, մենք մազ անգամ չենք շեղվում մասնաւոր սեփականութեան սկզբունքից, որին պաշտպանելու մենք կոչված ենք։ Մենք առաջ ենք գնում և բոլորովին որոշակի արտայայտում ենք մեր մտադրութիւնը—տարածել սեփականութեան սկզբունքից բղխող բարիքները և գիւղացիութեան հողագործութեան այն ձևերին տերրիտորիայի վրա, որը մինչև այժմ զրկված էր այդ բարիքներից։ Մենք այդ անում ենք, կրկնում եմ, լիովին գիտակցաբար, խոստովանելով, որ սեփականութեան սկզբունքը պաշտպանում է հողագործի աշխատանքը, որ միայն այդ սկզբունքի հետ զուգակցելով հողագործի աշխատանքը ստանում է այն հրաշագործ ոյժը, որպիսին ընդունակ է խոշշաբեր աւազը՝ ոսկի և լերկ ապառաժը՝ ծաղկափթիթ պարտէզի վերածելու։

Բասկին ժողովրդական սօցիալիստների կողմից միանում է աշխատաւորականների նախագծին, պարզում է՝ թէ ինչ տառապանքներ ունի ագրարային հարցը լեհաստանային վիճակներում, անհրաժեշտ է համարում անյապաղ հաստատել տեղական կօմիտէներ նախապատրաստական աշխատանքներ կազմակերպելու համար։

Ջիմինը պարզում է, թէ որպիսի են եղել հողագործների և նրա թշնամի—ազնուականութեան պատմական ագրարային յարաբերութիւնները։

Պուրիշկեվիչը, ինչպէս նախագահ, առաջարկում է հետաօրին խօսել ագրարային հարցի հիմնական կէտերի ուղղութեամբ։

Ջիմինը գտնում է, որ ագրարային հարցի լուծումը պէտք է պատկանէ իրան ժողովրդին—յանձին նրա տեղական կօմիտէների։

Աֆանասիևը, որպէս համայնքի կողմնակից, առարկելով Սվեատոպոլք-Միրսկուն, գտնում է, որ համայնքի տիրապետութեան ժամանակ առանց այն էլ վատ ընթացող գիւղացիական տնտեսութիւնը աւելի ևս կը վատթարանայ հասարակական ոյժերը մասնակի միութիւնների բաժանելու ժամանակ։

Խվօրօստովինը հանգստութեան գրաւական համարում է ժողովրդական մասսաների տնտեսական մակերևոյթը բարձրացնելը և կարծում է, որ ամբողջ հողը առանց որևէ յետ գնման պէտք է գտնվի աշխատաւոր գիւղացիութեան ձեռքում։

Բօգաեօվ օրինակ բերելով Արևմուտքը, ուր ներկայացուցչական հաստատութիւնները իրանց իրաւունքները ձեռք են բերել դարերով, յոյս ունի, որ Դուման մէկ, 5 կամ 10 տարուց յետոյ անարեւն կիրագործէ ժողովրդի ցանկութիւնը. ցանկանում է, որ Դուման աշխատելու ընդունակ լինի։

Նէչիցայլօ բողոքում է գիւղացիութեան տգիտութեան վերաբերմամբ աջակողմեաններից նետած կշտամբանքների դէմ։

Բէյն աջակողմեանների կողմից պնդում է, որ հարցը շուտափոյթ պէտք է յանձնել ագրարային մասնաժողովին, տալով նրան սոսկ ընդհանուր ուղղութիւններ. ամենագլխաւորը Բէյնը համարում է, որ հարցը պէտք է լուծել մանրամասնաբար ոչ միայն ըստ էութեան, այլ և ըստ տերրիտորիայի։

Քահանայ Կօլօկօլնիկօվը պնդում է, որ հողերը պէտք է գրաւել առանց յետ գնման. նպատակայարմար է համարում անել ոռոգ գումար մասնաւոր սեփականատէրերից յօգուտ աշխատաւոր գիւղացիութեան։

Կուսպենսկին կողմնակից է գործունեայ և լուրջ մասնաժողով կազմելուն. մատնանշում է, որ Ջիմինը իր երկար, դէպի ունևոր դասակարգերը լիակատար ատելութիւն պարունակող ճառով չը բացատրեց, որ եթէ բաժանելու է, ուրեմն պէտք է բաժանել ... բան, ոչ թէ միայն հողը. տեղական ագրարային կօմիտէներին անուանում է «ագրարային» (?). խնդրում է հաստատել Կօլօկօլնիկօվի պահանջած հատուցման նորման։ Աջակողմեանները ցանկանում են, որ ագրարային հարցը լուծվի լուրջ կերպով և հանգիստ, առանց կողոպուտի։ Պնդում է, որ պէտք է կազմել 60 հոգուց մասնաժողով, որի կէսը բաղկանայ հողատէրերից, միւս կէսը—հողագործներից։

Քահանայ Տիխվինսկին, խիստ քննադատելով Ստոլիպինի դեկլարացիայի եզրափակման խօսքերը, յայտնում է, որ գիւղացիական դաշնակցութիւնը և աշխատաւոր խմբակը պնդում են—բոլոր հողերը յանձնել ժողովրդին առանց յետ գնման. հանդիմանում է աջակողմեաններին, որ այդ գործողութեան ժամանակ ռուսաց մեծ, խեղճ ժողովուրդը չի զրկի նրանց և նրանց էլ բաժին կը հանէ, թէև հասկանում է, որ գիւղացիական դաշնակցութեան պահանջների լիակատար իրականացումը միանգամից չի լինելու. քննադատում է սահմանադիր ռամկավարների ագրարային նախագիծը, գտնելով, որ նրա մէջ արդարութիւնը զոհ է բերված գործնականին։

Նախագահը յայտնում է, որ այսօր խօսեցին միայն 17 հռետորներ, խօսելու են կրկին 115 հոգի։ Վաղը հերթին դրված է նախահաշւի հարցը և ֆինանսների մինիստրը բացատրութիւններ է տալու նախահաշւի մասին. խնդրում է հողային հարցի վիճաբանութիւնների համար օր նշանակել։ Հողային հարցի լուծման համար նշանակվում է շաբաթական մէկ օր, այսինքն երկուշաբթի օրերը։

Պուրիշկեվիչը հարցնում է.—Ինչու մինչև այժմ Դումային չէ ներկայացվում աջակողմեանների հերթական յայտարարութիւնը՝ որ անհրաժեշտ է դատապարտել ամեն տեսակի քաղաքական սպանութիւնները։

Նախագահը յայտնում է, որ հերթական յայտարարութիւնները քննվելու են նրանց մտցված կարգով։

Նիստը փակվում է ժամը 5 և 57 րոպէին։

Գ. Բ. ԻՕԼԼՕՍ
(Կենսագրութիւն)

Իր ժամանակին մենք հաղորդեցինք Գրիգորի Բօրիսօվիչ Իօլլօսի եղեռնական սպանութեան մասին։ «Р. В.» լրագրի մեր ստացած վերջին համարը լի է նրան նուիրված յօդուածներով։

Սպանութիւնը կատարվել է Մոսկվայում օրը ցերեկով, ժամի մէկ և կէսին, այն ժամանակ, երբ նա վերադառնալիս է լինում լրագրի խմբագրատնից իր բնակարանը։ Չարագործները Գրանատնայա փողոցում, Տօրօպօվի տան մօտ բրաունինգի չորս գնդակներով մահացրել են նրան. գնդակներից մէկը կպել է կրծքին, իսկ միւսը բերնին և գոռը ընկնելով նոյն տան շէմքի առջև՝ շունչը փչել է մէկ և կէս րոպէից յետոյ։

Այն տունը, որտեղից կրակել են չարագործները, պատկանում է ռուս ժողովրդի դաշնակցութեան անդամ Տօրօպօվին։ Բացի գլխաւոր դարպասից տունը ունի մուտք և «Малая Николаевская» փողոցից, որին կպած է մի ուրիշ երկյարկանի շինութիւն, որի մէջ է գտնվում պատրիօտների օրգան «Вѣче»-ի խմբագրատունը և, ինչպէս ասում են, ռուս ժողովրդի դաշնակցութեան մարտական կազմակերպութիւնը։ Տեսնողներ կան, որ չարագործները 4 հոգի են եղել։

Հանգուցեալը անձնական ոչ մի թշնամի չէ ունեցել և սպանութիւնը անհատական վրէժառութեան արդիւնք չէ, այլ կատարված է քաղաքական հողի վրա, իբրև խմբագիր, հրապարակախօս, հասարակական գործիչ։

Գրիգորի Բօրիսօվիչ Իօլլօսը ծնվել է Օդեսսայում 1859 թւին։ Նա ունէր ընտանիք. զաւակ է և ծնողները մինչև այժմ էլ կենդանի են։ Աւարտելով Օդեսսայի 2-րդ գիմնազիան, նա նախ մտնում է Կիևի համալսարանի բժշկական ֆակուլտէտը, բայց, առանձին սէր չը տածելով դէպի բժշկական գիտութիւնը, մի տարուց յետոյ թողնելով համալսարանը, գնում է արտասահման ուսանելու։ Հայդելբերգի համալսարանում նա սովորում է իրաւաբանական և սօցիալական գիտութիւնները և ստանում քաղաքատնտեսութեան գիտութեան դօկտօրութիւն։

Արտասահմանից վերադառնալուց յետոյ նա սկսել է աշխատակցել «Р. В.» լրագրին, «Юридич. Вѣстникъ»-ին, եղել է քարտուղար իրաւաբանական ընկերութեան։ 80-ական թւականին Մոսկվայի համալսարանում նա ...թիւն է տալիս քաղաքատնտեսութեան դասախօսութեան համար, որից յետոյ նա գնում է արտասահման և բնակվում Բեռլինում։ Այնտեղից նա շարունակ թղթակցել է «Р. В.», «Торг.-Пр.-Г.» լրագիրներին, տալիս է մի շարք յօդուածներ «Вѣстникъ Европы», «Русская Мысль», «Русское Богатство» և այլ թերթերին, աշխատակցել է և արտասահմանեան թերթերին։ Բեռլինում հանգուցեալը ապրել է 15 տարի, բայց 1905 թւին Ռուսաստանի քաղաքական կեանքի բարդութիւնների պատճառով «Р. В.» լրագրի խմբագրութիւնը հրաւիրում է նրան Մոսկվա, որտեղ նա աշխատակցում էր թերթին, իբրև խմբագրիներից մէկը, մինչև մահ, և միայն անցեալ տարի կարճ ժամանակով բացակայել է խմբագրութիւնից Պետական Դումայի անդամ ընտրվելու պատճառով։ Դումայի արձակումից յետոյ մի ամսով նա նորից գնացել է Բեռլին ընտանիքի մօտ հանգստանալու և այնտեղից վերադառնալով աշխատել է, մինչև որ չարագործի գնդակը վերջ է տուել նրա կեանքին։

Մարտի 19-ին, հեռագրական տեղեկութիւնների համաձայն, տեղի է ունեցել Իօլլօսի թաղումը, որին ներկայ են եղել ժողովրդի և ուսանող երիտասարդութեան ահագին բազմութիւն։ Ճառեր են արտասանել Կիզեվետտերը, էքս-դեպուտատ Լեդնիցկին, «Р. В.» և ուրիշ լրագիրների ներկայացուցիչները, թւով 30 հոգի։ Դագաղի վրա դրված են եղել 80 պսակներ։

Տեսարանը եղել է յուզիչ։ Ինցիդենտներ տեղի չեն ունեցել։ Յանձին հանգուցեալի մամուլը կորցնում է նրանով իր տաղանդաւոր գործիչներից մէկին։

ՄԱՄՈՒԼ

Պետական Դումայի մարտի 9-ի նիստից յետոյ, երբ Ստոլիպինը միացաւ կադետների առաջարկին, սկսեցին ինչ որ շշուկներ երևալ, որ կադետների և կառավարութեան միջև բանակցութիւններ են տեղի ունենում համաձայնութիւն կայացնելու մասին։ «Русь» լրագիրը խօսելով այդ առիթով՝ այն կարծիքն է յայտնում, որ լուրերի հաւանականութեան հիմքը կադետների ակնկալ հզօրութիւնն է։

Իբրև կուսակցութիւն,—ասում է լրագիրը,—կադետները ներկայումս Դումայում մեծ ոյժ են կազմում։ Նրանց աջողութիւնը վերջին նիստում անվիճելի է և խոշոր, որովհետև Դումայի ճնշող մեծամասնութիւնը նրանց կողմն էր։ Մենք, ուրեմն, որ դեռ ևս չենք ընտելացել պարլամենտական կեանքին, չենք կարողանում միանգամից գնահատել այդպիսի փաստի նշանակութիւնը երկրի ամբողջ կեանքի համար, սակայն նրա նշանակութիւնը շատ հասարակ է.—եթէ կադետները կարող լինէին իրանց ձեռքում պահել Դումայի ամբողջ նստաշրջանի ժամանակ այդ մեծամասնութիւնը, այն ժամանակ Ռուսաստանը կը վերակազմվէր նրանց ծրագրի համաձայն։

*

Համոզվելու համար, որ կադետների և կառավարութեան միջև համաձայնութիւն չէ կարող կայանալ, բաւական է աչքի անցնել մինիստրական «Россія» լրագիրը։ Ահա այդ խնդրի մասին ինչ է ասում նա.

Բանը նրանումն է, որ միայն գիտակից ինքնախաբէութիւնը կարող է թոյլ տալ վերաբերվելու կադետներին, իբրև մի այնպիսի կուսակցութեան, որը երբևիցէ և որոշ պայմաններում պատրաստ լինէր կայացնելու այն տեսակ համաձայնութիւն, որի շնորհիւ բոլոր օգուտը, ամբողջ ազդեցութիւնը, աջողութիւնը, ամբողջ ոյժը, բոլոր արտակարգ և ամենազօրեղ ոյժը կը լինէր արդէն ոչ կադետների խմբակի կողմը։ Նպատակները ուրիշ են, տակտիկան՝ ուրիշ։ Այդ է կադետական խմբակի հիմնական օրէնքը։ Ցանկալի տակտիկայի կադետները ձայն կը տան և՛ Բամբիչկայի հետ, և՛ չափաւորների հետ, և՛ ում հետ ուզէք։ Բայց ոչ մի բան և ոչ մի ժամանակ չէ կարող ստիպել նրանց մոռանալ այն, որի անունով սկսել են նրանք իրանց խաղը։ Նրանք չեն կարող մոռանալ այդ, թէկուզ հէնց այն պատճառով, որ չափազանց շատ են վատնել այդ խաղի ժամանակ...

Հետևապէս աջակողմեանների հետ միասին քուէարկելը ամենևին չէ փոխում այն երևոյթը, որոնք կոչում են կադետիզմի անունը։ Դրանից բնական կը լինէր եզրակացնել, որ կարելի է դատողութիւններ անել՝ թէ որչափ կադետները, իրանց կուսակցական տեսակէտով, խելացի կամ անխելացի են վարվել ձայն տալով աջակողմեանների հետ միասին, բայց ամենափոքր հիմք անգամ չը կայ սպասելու, որ այդ ձայնատւութիւնը ունի պետական որևէ կարևոր նշանակութիւն։

*

«Моск. Еж.» թերթում Իշ. Եւգ. Տրուբեցկոյը մի շարք դիտողութիւններ ու խորհրդածութիւններ է անում կոնֆլիկտի հնարաւորութեան և նրա հետևանքների մասին։

Մենք կանգնած ենք մի երկարատև սահմանադրական կրիզիսի առաջ, որը հազիւ թէ կարելի լինի լուծել խաղաղ սահմանադրական ճանապարհով։ Եթէ կառավարութիւնը արձակելու լինի Դուման, նա դրանով անխուսափելիօրէն ոտք կը դնի պետական յեղաշրջման ճանապարհի վրա։ Երրորդ Դուման, հրաւիրվելով գոյութիւն ունեցող ընտրողական օրէնքի հիման վրա, անկասկած, կը լինի աւելի ևս ձախակողմեան, քան իր նախորդները. արձակումը միտք կունենար միայն այն դէպքում, եթէ փոխվելու լինէին ընտրողական օրէնքները։ Մինչդեռ առանց Դումայի այդպիսի օրէնք հրատարակել՝ կը նշանակէր խախտել հիմնական օրէնքները։ Բացի դրանից, նոր ընտրողական օրէնքը կարող էր ապահովել ձայների մեծամասնութիւնը Դումայում կառավարութեան համար՝ միայն զրկելով կամ սահմանափակելով ազգաբնակութեան այն մասսայի ընտրողական իրաւունքները, որը ներկայումս ընտրում է օպպօզիցիօն կամ ուղղակի յեղափոխական թեկնածուներ։ Ցենզաւոր Դուման չէ կարող հեղինակութիւն վայելել երկրում։ Նա միայն կը բորբոքէ դասակարգային ատելութիւնը և կուժեղացնէ յեղափոխական խլրտումը։ Վերևից սկսված յեղափոխութիւնը բնականաբար և անխուսափելիօրէն առաջ կը բերէ նոր արիւնահեղ ցնցումներ։

—

«Երկրի Ձայնը» հրատարակել է իր № 10-ում մի շատ հետաքրքիր նամակ, որը պատկանում է յայտնի երիտասարդ-թիւրք գործիչ դօկտ. Աբդուլլահ Ջէվդէթ-բէյի գրչին։ Դա այն անձնաւորութիւնն է, որ հայ-թուրքական ընդհարումների ժամանակ մի կոչ ուղղեց Կովկասի թուրքերին, հրաւիրելով նրանց սթափվել, դոն չը գնալ բռնակալական ցաւերի։ «Երկրի ձայն»-ի խմբագրութեան ուղղված այդ նամակում բողոքում է «օսմանեան կայսրութիւն» դարձուածքի դէմ, շատ ճիշտ կերպով նկատելով, որ ոչ մի երկիր չէ կոչվել տիրող արքայական տոհմի, դինաստիայի անունով։ Ահա այդ նամակը.

Ես ասում եմ միշտ Թիւրքիա, և ոչ երբէք Օսմանեան Կայսրութիւն։

Օսմանեան արքայատոհմի իշխանները՝ իրենց նախնիքների անունը տալով Թիւրք Կայսրութեան, ապացուցել են միայն իրանց եսասիրութիւնը, էգօիզմը։ Կա՞յ մի երկիր, որ կոչէր իր վեհապետի տոհմի անունով։

Ես մերժում եմ ուրեմն, զզւանքով ու զայրոյթով, «Օսմանեան» յորջորջումը։ Մեր հայ հայրենակիցները պէտք է գիտենան, որ քաղաքականապէս մենք բոլորս Թիւրք ենք, ինչպէս Ֆրանսիայի ամեն քաղաքացի՝ հրեա, արաբ, չինացի, և այլն, ֆրանսիացի է։ Ինչու համար մեր ոչ-թիւրք քաղաքացիները նւազ պատւաբեր պիտի նկատէին կրել 20 միլիօն հաշւող մի ազգի անունը, քան առհասարակ բռնակալ, այլասերւած, վաւաշոտ, ստոր և քաղաքացիական ամեն առաքինութիւնից զուրկ մի արքայատոհմի անունը։ Թիւրքիայի ամեն քաղաքացի թիւրք է, և հետևաբար, իբրև այդ, որպէս ընտրող և ընտրելի։

Այսօր մենք բոլորս, մահմեդական թէ քրիստոնեայ, ստրուկ ենք։

Բայց վաղը մենք ճաւասար տէրերը պիտի լինենք այդ երկրի։ Ո՛չ ոք կարող է մի ուրիշից բարձր լինել, բայց եթէ իր քաղաքացիական առաքինութեամբ, այն անսահման ծառայութեամբ, որ մատուցանում է մայր-հայրենիքին։

Մենք քայլում ենք և պէտք է քայլենք դէպի մի այդպիսի իմաստուն ու տրամաբանական ապագայ։ Չկայ փրկութիւն ընդհանուր հայրենիքից դուրս։ Ո՛չինչ տրամաբանական է, քան ընդհանուր հայրենիքի գաղափարը։

Վաղը մեր հայ, հրեա, յոյն և այլ հայրենակիցները պէտք է կոչեն պաշտպանելու Թիւրքիայի, մեր ընդհանուր-հայրենիքի, բաղդաւորութիւնն ու անկախութիւնը, ռազմական դաշտում որպէս զինւոր և որպէս սպայ։

Օսմանեան սուլթանները, մեր Թիւրքիայի աղէտները, մերժել են հայերի կամ ուրիշ քրիստոնեայ ազգաբնակութիւնների մասնակցութիւնը զօրքի շարքերում, որովհետև գիտէին, թէ դա կը լինէր եղբայրացման մի միջոց Թիւրք կայսրութեան բոլոր տարրերի միջև։ Ահա թէ ո՛րքան անարգ են նրանք, ո՛րքան քիչ նախանձախնդիր երկրի զօրութեան մասին, ո՛րքան թաղված իրանց գծուծ եսասիրութեան մէջ։

Հռչակենք արիաբար, թէ ինչ արժեն այդ սուլթանները։ Բաւական է, որքան վերապահութեամբ, քաղցրութեամբ խօսեցինք։

Որքան ժամանակ որ Օսմանի արքայատոհմի սուլթանները մեզ կանարգեն, մերժելով մեզ՝ ազատ ու բաղդաւոր ապրելու իրաւունքը, մեր ինչքերի և կեանքերի ապահովութիւնը, մենք նրանցից զզւելով կը զզւենք և անարգելով կանարգենք։ Մենք նրանցից զզւելով կը զզւենք, մենք նրանց անարգելով կանարգենք, եթէ շարունակեն մեր վրայ նայել, որպէս կաթնատու կովերի վրայ, կաթնատու կովեր, որոնց ամբողջ կաթը քամելուց յետոյ, պէտք է մորթել։

Մեր պարտականութիւնն է ապացուցել, որ մենք կովեր չենք։

Մեր պարտականութիւնն է ապացուցել, որ մարդ ենք։

Եւ այդ՝ ո՛չ թէ դատարկ խօսքերով, ո՛չ, ամենևին ո՛չ»։

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գօրիս, մարտի 14-ին

Ինչպէս անմշակ երկրում բահ ու բրիչը ձեռքին կանգնած աշխատաւորը շուարած է մնում մշակութեան կարօտ երկրի առաջ ու չէ իմանում որտեղից է աւելի յարմար փորել, փորփրել հողը, այնպէս էլ թղթակցի դրութիւնն է Զանգեզուրում։

Նախ՝ գաւառը կենսական կարիքներով և ցաւերով է լի, որոնց հրապարակ հանելը անչափ կարևոր և անհրաժեշտ է. սով, մերկութիւն, կենսական մթերքների պակասութիւն, ահա խեղճ գիւղացուն կաշկանդող կարիքները, որտեղից ազատվելու համար ոչ մի հնար ու միջոց չունի խեղճը։

Երկրորդ՝ իր կեանքում կօզակի դաժան երեսը չը տեսած գիւղը ստիպված է ծանր էկզեկուցիայի դիմանալու։ Մի քանի գիւղերում կօզակներ և հետևակ զօրքեր կան տեղաւորված, որոնք էլ ոչ պակաս կերպով նպաստում են կարիքների մեծանալուն և դրութեան անտանելիութեան։

—Ո՞վ էր մինչև այժմ գարու պուզը 2 ր. տեսել,—ասում է գիւղացին գլուխը շարժելով։ —Այսքան նեղութիւն և պատիժ տանող մեր անբախտ գաւառը դժւար թէ դիւզգինը ընկնի (բարեկարգվի)։ Եղ դէկուցիէքը (էկզեկուցիան) Աստուծու տւած պատժից աւելի սարսափելի են. ծեծում, ջարդում և ձիերանց համար խոտ ու գարի են ուզում, երբեմն էլ ցորենի ջուալը են շուռ տալիս ձիանց առաջ, մեր քթերից ծուխ ու մուխ հանում։ Ա՛խ, մեր սրտի հառաչանքը երկար ժամանակ չի մոռացվի։ Բայց էլի փառք և երանի մեր ճակատին, մեր համբերութեան. մեր տեղ ուրիշ մարդ լինէր, հիմա սրտապատառ եղած կը լինէր։ Ինչմ՞ը ասես որ այս երկու տարում մեր գլուխը չեկաւ, բայց մենք դեռ սաղ ենք, մենք դեռ համբերում ենք։

Եւ այժմ գարուն է. ահա նոր մտորում, նոր ցաւ խեղճ գիւղացու համար։ Նա՝ ահ ու սարսափով, փախստականների յատուկ կասկածանքով դիմում է գարնան աշխատանքի և ամեն մի քայլափոխում ինքն իրան հարցնում. «հարամ, ինչ կը լինի մեր երկրի դրութիւնը այս գարնան. թուրքերը խաղաղ կերպով սար կը բարձրանան, թէ՞ իրանց անհաշտութեամբ դարձեալ տեղիք կը տան ընդհարումների»։

Մեր ողորմելի գաւառների խղճալի, կարեկցի կարօտ, բարենորոգ ձեռքի կարօտ լինելը թուրք ժողովուրդը չը հասկացաւ։ Չը հասկացաւ, որ Կովկասը զրկվում է ապագայ խաղաղ կեանք ունենալու յոյսից, որ նրանում ապրող ազգերը զրկաքաց պիտի սպասեն նրա արշալոյսին։ Այո, թուրքերի տմարդի բարքը երեսաց և նորերս Հին-Նախիջևանում տեղի ունեցած դէպքով, որ ամեն մի լսողի սրտում թոյն է կաթում, խաղաղ սիրտն է վրդովվում։

Ինչի՞ն են նմանում մեր գաւառները. նրանք արդեօք աւելի նման չե՞ն սգաւոր տների, քան թէ կենդանի, բանական մարդ իր մէջ պահող բնակավայրերի։

Մեր Զանգեզուր գաւառը այժմ խորհրդաւոր կացութեան մէջ է։ Ի՞նչ կը լինի մեր ստեկ ապագան—ահա մեր գիւղացուն տանջող միտքը, նրա մտածմունքի առարկան։

Սագանդարեան

«ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ»

Ռուսաստանի և Պարսկաստանի ազատագրական շարժումները մի կողմից, «անձնական տուրքի» և հետզհետէ աւելի անհանդուրժելի դարձող ճնշումների ազդեցութեամբ այլ և այլ գաւառներում, օրինակ Կաստեմոնիում, Տրապիզոնում, և մանաւանդ Էրզրումում, թիւրք ժողովրդի կատարած խռովայոյզ ցոյցերը միւս կողմից, կենդանութիւն և եռանդ են ներշնչել երիտասարդ-թիւրքերին։

Թիւրքիայի այդ դժգոհ տարրերը, որոնք մինչև այժմ իրանց ագիտացիան սահմանափակում էին թղթի և սոսկ գրականութեան շրջանակում, նոր յոյսերով ու նոր ակնկալութիւններով լիցված՝ թևակոխել են գործունէութեան մի այլ փաղիսի մէջ։ Նրանք այժմ կազմակերպվում են, ցոյց են տալիս գործողութեան ծարաւ։

Ինչ որ այդ նոր երևոյթի մէջ ամենից աւելի ուշագրաւ է, թուրք գործիչները այլևս չեն գործում հին մեթօդով. նրանք չեն առանձնանում։ Ռուսաստանի յեղափոխութիւնը վճռապէս ապացուցել է, որ բռնակալութիւնները տապալվում են միայն ամբողջ երկրի միահամուռ ոյժերով, առանց ցեղի ու կրօնի խտրութեան։

Ահա ինչու համար Թիւրքիայի քաղաքական գործիչները, փոխանակ առանձին կազմակերպութիւններ ստեղծելու, հիմնում և ոյժ են տալիս այնպիսի ընկերակցութիւնների, որոնց մէջ մտնում են և՛ թիւրքը, և՛ արաբը, և՛ հայը, և՛ յոյնը, մի խօսքով Թիւրքիայի ամբողջ ազգաբնակութեան ներկայացուցիչները։

Այդ տեսակ մի կազմակերպութիւն հիմնվել է վերջին ժամանակներս Եգիպտոսի Կահիրէ քաղաքում՝ «Օսմանեան Սահմանադրական Միութիւն» անունով, որին մասնակցում են թիւրքահպատակ բոլոր ցեղերը։

Այդ քաղաքական նոր կուսակցութիւնը ստեղծել է արդէն իր օրգանը, «Շուրայը Օսմանի»—Օսմանեան Սահմանադրութիւն,—որը իր առաջին համարում Միութեան նպատակը պարզում է հետևեալ կերպով.

1) Հաստատել Թիւրքիայում սահմանադրական կառավարութիւն պատասխանատու մինիստրութեամբ։

2) Միութիւնը պէտք է գործ ածէ օրինական ամեն միջոց՝ հասնելու իր նպատակին։

3) Միութեան կարող են մասնակցել, առանց ցեղի և կրօնի խտրութեան, օսմանեան բոլոր հպատակները։

4) Միութիւնը պիտի ունենայ իր կենտրոնական Կօմիտէն, որը պէտք է զբաղվի ծրագրի վերջնական խմբագրութեամբ։

5) Միութեան առժամեայ կենտրոնատեղի ընդունված է Կահիրէ քաղաքը։

6) Կենտրոնական Կօմիտէն պէտք է գծէ կազմակերպութեան գործունէութեան ընդհանուր եղանակը։

7) Միութեան նպատակը ոչինչ գաղտնի բան չը պարունակելով, մենք մեզ պատւ ենք զգում յայտարարելու նրա կազմութիւնը։

Յիշեալ Միութեան ծրագիրը լոյս է տեսել առայժմ չորս լեզուներով. թիւրքերէն, ֆրանսերէն, հայերէն, արաբերէն։ Միութեան նպատակները խոշոր գծերով այդպէս բնորոշելուց յետոյ, «Շուրայը Օսմանի»-ն շարունակում է.

Մեր նպատակը, որքան պարզ, նոյնքան ազնիւ է. շտապեցնել լայն կերպով օժտված սահմանադրական մի ռէժիմի հաստատումը, փրկութեան միակ միջոցը, որ մնում է մեզ համար։

Մենք չենք ընդունում բնաւ ցեղական և կրօնական ոչ մի խտրութիւն։ Քաղաքական լեզուով խօսելով, մեզ համար գոյութիւն չունի ո՛չ տիրապետող ցեղ և ո՛չ էլ նուաճված ժողովուրդ։ Թիւրք կայսրութեան իւրաքանչիւր քաղաքացի միևնոյն իրաւունքներն ու միևնոյն պարտականութիւններն ունի դէպի մայր-հայրենիքը։ Ներկայ բռնակալ ռէժիմը մինչև այժմ այլ և այլ ցեղերի և կրօնական համայնքների միջև սերմանել է միայն ատելութիւն։ Մենք պէտք է ցոյց տանք այդ երկպառակված տարրերին թէ որտեղ է չարիքը և նրա արմատը։

...Երբ մի ազգ ձգտում է դէպի ազատութիւն, ամեն ճանապարհ տանում է դէպի իր նպատակը։

Զզւելի բռնակալութիւնը, որ աւերում է ներկայումս մեր դժբաղդ հայրենիքը, բաց է արել նոյնիսկ ամենաքնած աչքերը։ Մենք չենք կարող այլ ևս երկար ապրել, եթէ չը համախմբվենք ամենքս, մահմեդական թէ ոչ-մահմեդական, այսինքն՝ կայսրութեան բոլոր տարրերը։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

«Кіевск. Мысль» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ Դումայի կուլուարներում և քաղաքում անհաւատալի լուր է պտտում, իբր թէ մօտ օրերս Դուման արձակելու են։ Պ. Ա. Ստոլիպինը մարտի 14-ի նիստի ընդմիջման ժամանակ ասել է Գօլովինին. «Դումայի զբաղմունքները ուղղակի միտինգային բնաւորութիւն են ստանում։ Այդպիսի պայմաններում Դուման, ի հարկէ, անկարող է աշխատել»։ Մարտի 11-ին Ցարսկոյէ-Սելօյում բարձրաստիճան պաշտօնեաները մի խորհրդակցութիւն են ունեցել Ստոլիպինի և մինիստրական կաբինետի միւս անդամների մասնակցութեամբ։ Այնտեղ այն միտքն են յայտնել, որ անհրաժեշտ է արձակել Դուման, ի նկատի առնելով՝ որ նա յեղափոխական կազմ ունի։ Ստոլիպինը խնդրել է սպասել մի 10 օր ևս, պատճառաբանելով իր այդ առաջարկը նրանով, որ առայժմ Դումայի հետ հնարաւոր է միասին աշխատել։ Անսպասելի քայլեր անելու երաշխաւորութիւններ չը կան։ Բոլոր կուսակցութիւններն էլ քննում են այն հարցը, թէ ինչ տակտիկա ընտրեն Դուման արձակելու դէպքում։

ՊԷՏՔ Է ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

I

Հասարակութեան մի որոշ մասի և նրանց արտայայտիչ մամուլի մէջ նորից են սկսվել արշաւանքներ ժողովրդական ազատութեան կուսակցութեան դէմ։

Արդէն մի քանի օր է շարունակ յօդուածներ են թխվում, հեռագիրներ յերիւրվում՝ վաղաժամ դատապարտելով ու մերկացնելով իբր թէ նրանց տգեղ դէմքը։

«Դաւաճանում են, թեքվում են դէպի աջ, ձեռք են մեկնում Ստոլիպինին»,—ահա ինչպիսի շշուկներ են լսվում։

Դա, ի հարկէ, նոր երևոյթ չէ։ Ձախակողմը, գիտութեամբ թէ անգիտութեամբ, պարբերաբար սկսում է իր արշաւանքը այն ժամանակ, երբ կադետները փորձում են զսպել նրա հակապարլամենտական և միտինգային յափշտակութիւնները, որոնք կարող են վարկաբեկել Դուման, շտապեցնել կօնֆլիկտը կառավարութեան հետ և դրանով էլ վտանգել Դումայի գոյութիւնը՝ ժողովրդին չը տալով ոչ ազատութիւն, ոչ հող և ոչ էլ հաց։

Ներկայ Դումայի օպպօզիցիան անհետևողական կը լինէր, եթէ, նախատեսնելով այդ հետևանքները, չը մաքառէր միաժամանակ ծայրայեղ ձախակողմեանների այդօրինակ ձգտումների դէմ, որոնց իրագործումը հրճւանք կը պատճառէր կառավարութեանը և ազատագրութեան թշնամի աջակողմեաններին։

Այդ պատճառով կադետները, անխախտ պահպանելով իրանց դիրքը, հաւատարիմ մնալով ժողովրդական ազատութեան դրօշակին, անշեղ կերպով վարում են իրանց պարլամենտական գործունէութիւնը, առանց դաւաճանելու օպպօզիցիայի առաջխաղացութեանը։

Այդպէս էլ վարվեց ժողովրդական ազատութեան փրակցիան Պետական Դումայի մարտի 9-ի նիստում՝ ճնշող մեծամասնութեամբ անցկացնելով Ռօդիչեվի առաջարկը մատակարարութեան գործի մասին, որին միացաւ ոչ միայն աջակողմը, այլև ձախակողմեանների մի մասը։

II

Մատակարարութեան հարցը Դումայում առաջ եկաւ անսպասելի կերպով։ Այդ առիթով եղաւ երկու առաջարկութիւն, մէկը՝ ձախակողմեաններից, իսկ միւսը՝ կենտրոնից։

Հարցը չափազանց հրատապ էր. քաղցածները չէին կարող սպասել... Մինչդեռ մատակարարութեան գործը կանօնաւոր հիմքերի վրա դնելու համար շաբաթներ էին պահանջվում։

Ձախակողմը գործը շտապեցնելու համար առաջարկում էր, որ Դուման ինքը ղեկավարէ մատակարարութեան գործը, մտնի ժողովրդի մէջ, տեղական մարմիններ կազմակերպէ, կարիքները ուսումնասիրէ և դրանով էլ ժողովուրդը կազմակերպէ ու համախմբէ Դումայի շուրջը։

Այդ առաջարկը նորութիւն չէ. նա արվեց և անցեալ տարի, բայց աջողութիւն չունեցաւ, որովհետև Դուման օրէնսդրական մարմին լինելով՝ չէ կարող գործադիր քայլեր անել։

Միևնոյն ժամանակ այդ առաջարկը ոչ միայն չէ շտապեցնում, չէ դիւրացնում քաղցածների թիւը, այլ և ստեղծում է որոշ դժուարութիւններ ու վտանգաւոր բարդութիւններ։

Անշուշտ Դումայի, ապա ուրեմն և ժողովրդի շահերի տեսակէտից դա ներկայումս միանգամայն ցանկալի չէ և աննպատակայարմար է։ Օպպօզիցիօն կենտրոնի առաջարկը կայանում է նրանում, որ Դուման պէտք է ընտրէ մի մասնաժողով քննելու կառավարութեան մատակարարութեան համար յատկացված բիւջէն ու գործունէութիւնը և ժամանակաւոր օրէնքներով կանօնաւորէ մատակարարութեան ամբողջ գործը։

Ինչ վերաբերում է ժողովրդին անմիջական օգնութիւն հասցնելու հարցին, դա բնականաբար կը թողնվէր առ այժմ զեմստվային ինքնավարութիւններին կամ այլ մարմիններին, որտեղ այդպիսիները կան։

Օգնութիւն հասցնելու համար դրանից աւելի շուտափոյթ մի եղանակ չը կայ և չէ էլ կարելի ներկայ պայմաններում ստեղծել։

Ռօդիչեվի առաջարկը աւելի գործնական համարվեց և ընդունելութիւն գտաւ։

III

Այդ հանգամանքը, գուցէ, այնքան էլ աչքի չընկնէր, եթէ Ստոլիպինը չը յայտարարէր՝ որ միանում է Ռօդիչեվի առաջարկին։

Բլանկիստական հովերով ղեկավարվող ծայրայեղ ձախակողմը սկսեց թմբուկ նայել այդ արտակարգ երևոյթին, և ահա, չէ անցնում մի օր, «Сегодня» լրագիրը տպագրում է մի սենսացիօն լուր, որ կադետների ու կառավարութեան միջև բանակցութիւններ են տեղի ունենում մինիստրական պաշտօնների համար։

Այդ սենսացիօն լուրը բերնից բերան է անցնում, հակակադետական մամուլը թմբկահարում է ի գիտութիւն ժողովրդի—«կադետները դաւաճանեցին»։

Ցաւալիութիւնը, էֆֆեկտը աննման էր. աջակողմը Ստոլիպինի հետ միասին հրճւանքի մէջ է, իսկ ծայրայեղ ձախակողմը կուսակցական ֆանատիկոսութեամբ շարունակում է, հակառակ իր կամքի, ծառայել պատրաստված պրօվօկացիային և կազմալուծելով օպպօզիցիան՝ պատրաստել աջակողմի յաղթանակը։

Եւ այդպիսի շինծու սենսացիօն լուրերին վերջ չը կայ, իսկ պրօվօկատորական ստեղծագործութիւնները կարողանում են հող գտնել ոչ միայն ագէտ ժողովրդի մէջ, այլ և լուրջ

մամուլի օրգաններում ու կուսակցութիւնների մէջ։

Լոյս տեսնող հերքումները արտատպելով հակակադետական մամուլը, այնուամենայնիւ չէ հրաժարվում այդ սենսացիօն լուրերի հնարաւորութիւնից, հաւանականութիւնից, որին ձայնակցում է և կովկասեան մամուլը։

Վերջին տեղեկութիւնները բարեբախտաբար կտրական կերպով հերքում են այդ ստայօդ, պրօվօկատօրական լուրը։

Սօցիալ-յեղափոխական և ժողովրդական սօցիալիստների ֆրակցիաները շտապում են այսօր հերքել այդ լուրերը։ Հերքում է «Слово» լրագիրը, հերքում են կադետները։

Ժամանակ է վերջապէս մեծ զգուշութիւն պահպանել այդպիսի լուրերի վերաբերմամբ, մանաւանդ որ դա առաջինը չէ։

Պրօվօկացիան չէ կարող կադետներին շեղել իրանց պարլամենտական ուղիղ ճանապարհից և արատաւորել ժողովրդական ազատութեան դրօշակը։

Պէտք է զգոյշ լինել։

Լ. Դանիէլեան

ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հեռագիրը հաղորդեց, որ զինուորա-դաշտային դատարանների դրութիւնը վերացնելու մասին Դումայում առաջարկված օրինագծի մէջ ուղղում մտցնելու հարցը պատգամաւորների մեծամասնութեան կողմից մերժված է և ընդունված է օրինագծի այն ձևը, որ առաջարկված էր կադէտների կողմից։ Այս վերջինների մտցրած և Դումայի մեծամասնութեան կողմից ընդունված օրինագիծը հետևեալն է. «1906 թ. օգոստոսի 19-ին Բարձրագոյն հաստատված զինուորա-դաշտային դրութիւնը վերացվում է»։ Իսկ առաջարկված ուղղումը, որ արել է Դումայի սօց.-դեմօկրատական ֆրակցիան և որ, հեռագրի ասելով, մերժվել է մեծամասնութեան կողմից, իբրև մի աւելորդ և խնդիրը բարդեցնող կտոր, հետևեալն է. «Ոչ զինուորական դասին պատկանող քաղաքացիները երբեք զինուորական դատարանի չը պէտք է ենթարկվեն»։

Առաջին անգամից և մանաւանդ ոչ-իրաւաբան և իրաւաբանութեան նրբութիւններին անտեղեակ մարդուն, խիկալպէս, երևում է իսկոյն, որ այդ վերջին ուղղումը բոլորովին աւելորդ ու անպէտք բան է։ Քանի որ օրինագծի մէջ որոշ կերպով ասվում է, թէ՝ զինուորա-դաշտային դրութիւնը վերացվում է խսպառ, ուրեմն էլ ինչ կարիք կայ առանձնապէս շեշտելու, թէ ոչ-զինուորական դասին պատկանող քաղաքացիները չը պէտք է երբեք զինուորական դատարանի ենթարկվեն, մտածում է մարդ առաջին անգամից։ Սակայն, ինչպէս յայտնի է, օրէնսդրական և իրաւաբանական խնդիրները այնչափ մութ անկիւններ են պարունակում իրանց մէջ, որ շատ բան միանգամայն պարզ և յստակ համարվելով մեզ՝ հասարակ մահկանացուներիս համար, բոլորովին այլ է հանդիսանում հմուտ մասնագէտների նուրբ բացատրութիւններից յետոյ։ Այդ իսկ պատճառով խիստ հետաքրքիր և կարևոր ենք համարում «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել «Товарищъ» թերթում լոյս տեսած պ. Ֆալէևի յօդուածի հետ, որ նա համարեա թէ նոյն խօսքերով կրկնեց երկու անգամ, մէկ՝ Դուման դեռ չը գումարված, իսկ երկրորդ անգամ՝ վերոյիշեալ օրինագիծը Դումա մտցնելու նախընթաց օրը։

«Զինուորա-դաշտային դատարանները վերացնելու լակօնական օրինագծին,—ասում է պ. Ն. Ֆալէևը,—հետևեալ բացատրութիւնն է կցված. «Զինուորա-դաշտային դատարանները Ռուսաստանի պատմութեան մէջ ամենամայլ և ամօթալի երևոյթներից մէկն են կազմում։ Այդ ամօթը մի անգամ ընդ միշտ պէտք է ոչնչացվի»։

«Դրա մէջ, ի հարկէ, ոչ ոք չէ կասկածում,—շարունակում է պ. Ֆալէևը։—Սակայն սահմանադիր-ռամկավարականների ֆրակցիայի մտցրած օրինագիծը հէնց այն մեծ պակասութիւնն ունի, որ նա չէ ոչնչացնում «ամօթը», և այդ ամօթը դեռ գոյութիւն կունենայ, եթէ նոյնիսկ օրինագիծը ընդունվի Դումայի և Պետական Խորհրդի կողմից ու օրէնքի ոյժ ստանայ։

«Խնդիրը այնչափ էլ հասարակ չէ։

«Օրինագծի ընդունվելն ու հաստատվելը, ի հարկէ, կոչնչացնի դաշտային դատարանների մասին եղած օրէնքը, բայց այն օրէնքը միայն, որը մինիստրական խորհուրդը մտցրեց 1906 թ. օգոստոսի 19-ին։

«Բայց դրանով չեն ոչնչանայ ո՛չ դաշտային օրէնսդրութեան մասին եղած օրէնքները, ո՛չ ինքը՝ դաշտային օրէնսդրութիւնը, ոչ էլ նոյն իսկ ոչ-զինուորական դասին պատկանող քաղաքացիներին դաշտային դատարանների ձեռքը յանձնելու հնարաւորութիւնը։

«Ֆրակցիան մի շատ տարօրինակ իրաւաբանական սխալ թոյլ տուեց, որ չէ կարելի ներել հէնց սահմ.-ռամկավարների կուսակցութեանը, որի մէջ քիչ չեն թէօրետիկ և պրակտիկ իրաւաբանները, քիչ չեն և պրօֆեսօրական աստիճան ունեցողները։

«Բանը նրանումն է, որ զինուորա-դաշտային դատարանների մասին եղած օրէնքը մտցվել է հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի զօրութեամբ։ Այդ օրէնքը ոչնչացնելու համար բոլորովին կարիք չը կայ նոր օրինագիծ մտցնել։ Ընդհակառակը, այդ օրէնքը շարունակական դարձնելու համար է, որ մինիստրութիւնը պէտք է առանձին օրինագիծ մտցնի։ Իսկ եթէ այդպիսի օրինագիծ չը մտցվի, կամ եթէ մտցվածը չընդունվի կամ չը հաստատվի, այս տարվայ ապրիլի 19-ին զինուորա-դաշտային դատարանների մասին եղած օրէնքը ինքնըստինքեան կորցնում է իր ոյժը, հէնց նոյն հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի հիման վրա, իբրև մի ժամանակաւոր, բացառիկ միջոց։

«Այդպիսի օրինագիծ մտցնելուն մինիստրական խորհրդի նախագահը կարող է առարկել, որ օրէնքը ինքնըստինքեան կոչնչանայ և իզուր է Պետական Դուման իր ուշադրութիւնը հեռացնում աւելի կարևոր և բարդ մինիստրական օրինագծերից։ Եւ ի նկատի առնելով, որ կադետների առաջարկած՝ զինուորա-դաշտային դատարանների վերացնելուն վերաբերվող օրինագծի քննութիւնն ու վերջնական հաստատվելը կարող է մէկ ու կէս և երկու ամիս տևել, ուստի, եթէ օրինագիծը ընդունվի էլ, այնուամենայնիւ դաշտային դատարանները հազիւ թէ ապրիլի 19-ից առաջ վերացվեն, այսինքն՝ ճիշտ այն ժամանակ, երբ նրանք պիտի վերանային և առանց օրինագծի։

«Հետևապէս, ոչ գործնական և ոչ թէօրետիքական կողմից, առաջարկված օրինագիծը չէ կարող ներկայ ժամանակի համար նշանակութիւն ունենալ։

«Բայց մենք աւելի հեռուն ենք գնում և նորից կրկնում ենք, որ առաջարկված օրինագիծը գործնականապէս չի ոչնչացնի դաշտային դատարանները։ Օրինագիծը կազմողը մոռացել է այն երկու օրէնքները, որ հրատարակվեցին 1906 թ. օգոստոսի 20-ին։ Այս օրէնքներն էլ նոյնպէս դաշտային դատարանների մասին են խօսում, որոշում են նրա կազմը, գործունէութիւնը և գործադրելու պայմանները։ Իսկ այդ օրէնքները մտցված են ոչ թէ իբրև բացառիկ և ժամանակաւոր միջոցներ ու հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի կարգով, այլ իբրև մշտական և մշտապէս գործող օրէնքներ, որոնք արդէն կոդիֆիկացիայի կարգով մտցված են զինուորական օրէնսդրութեան գրքի մէջ և ուր նրանք արդէն ամուր տեղ են բռնում զինուորա-դատաստանական կանօնագրութեան IV-րդ բաժնում (XXIV-րդ գիրք, որ հրատարակված է 1903 թւականին և լրացված 1906 թ.)։

«Այդ օրէնքներն էլ դաշտային օրէնսդրութեան մասին են խօսում և գործում են բոլորովին անկախ մինիստրական խորհրդի կողմից հաստատված օգոստոսի 19-ի ժամանակաւոր օրէնքից։

«Այստեղից շատ պարզ է,—աւելացնում է պ. Ֆալէևը,—որ Պետական Դումա մտցրած օրինագիծը չի ոչնչացնի ո՛չ դաշտային դատարանների ազդեցութիւնը և ոչ էլ դաշտային դատարանները։ Մինիստրական խորհրդից բղխած օրէնքը կոչնչանայ, բայց «ամօթը» կը մնայ։ Եւ դարձեալ, ամէն րոպէ մենք բոլորս կը մնանք կանգնած զինուորա-դաշտային օրէնքի սպառնալիքի տակ. ամէն րոպէ կարող են նորից ծնունդ առնել դաշտային դատարանները և կատարել նրանց մշակողների կամքը։

«Այդ մասին մենք քանիցս անգամ ասել ու կրկնել ենք։

«Մեր կարծիքով, մինիստրական խորհրդի ստեղծած օրէնսդրական լաբիրինթից դուրս գալու միակ ելքը այն է, որ այնպիսի մի օրինագիծ մտցվի, որը ասէր թէ՝ «ոչ մի բացառիկ օրէնսդրական իշխանութիւն ընդհանրապէս և զինուորա-դաշտային իշխանութիւն մասնաւորապէս չէ կարող և ոչ մի դէպքում իր ոյժը տարածել ոչ-զինուորական դասին պատկանող քաղաքացիների վրա»։

«Այսպիսի օրինագիծը պակաս լակօնական չէ, քան սահմ.-ռամկավարների մտցրած օրինագիծը։ Բայց նա միանգամայն օրինաւոր է և չէ կարող կառավարութեան կողմից այնպիսի առարկութեան հանդիպել, թէ նա հակասահմանադրական է, և որ ամենից գլխաւորն է, այդպիսի օրինագիծը մի անգամ ընդմիշտ կը հեռացնի ոչ միայն զինուորա-դաշտային դրութիւնը, գոնէ, ոչ-զինուորական դասին պատկանող քաղաքացիների համար, այլ և կը ոչնչացնի ընդհանրապէս զինուորական դատավարութիւնը, որը վերջին ժամանակներում բոլորովին հեշտութեամբ և ազատ կերպով մըցում էր մահվան պատիժներ գործադրելու մէջ։

«Մեր կարծիքով,—վերջացնում է իր խօսքը պ. Ն. Ֆալէևը,—դա միակ ելքն է, որով կարելի է «միանգամ ընդմիշտ ամօթին վերջ դնել»։

Պ. Ֆալէևի այս մանրազննին բացատրութիւնները լսելուց յետոյ միանգամայն հասկանալի է դառնում այն ուղղումը, որ ուզեցել է մտցնել Դումայի սօցիալ-դեմօկրատական ֆրակցիան։ Ինչպէս այս յօդուածի սկզբում բերված հեռագրական հաղորդագրութիւնից երևում է, սօցիալ-դեմօկրատական ֆրակցիայի ուղղումը միանգամայն համապատասխանում է հէնց պ. Ֆալէևի առաջարկին և լրացնում է, սրա ցուցմունքների համաձայն, օրինագծի մէջ եղած պակասորդը։ Այդ մասը, ասում ենք, միանգամայն հասկանալի է դառնում։ Բայց դեռ անհասկանալի է մնում մեզ համար, թէ ինչու այդ ուղղումը չէ ընդունվել Պետական Դումայի մեծամասնութեան կողմից և թէ ինչ հիմունքներով են ղեկավարվել կադէտ պատգամաւորները այդ կարևոր ուղղումը մերժելով։

Խ. Ազատ

ՇՈՒՇՈՒ ՋՈՒԼՀԱԿՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑԸ

Այսպէս է անուանվում այն համեստ արհեստանոցը, որ մի տարի է ինչ գոյութիւն ունի Շուշում։ Համեստ եմ ասում, որովհետև մեզանում սովորութիւն կայ, որ դեռ մի գործ չը սկսած փքուն ճառերով աշխարհն են դղրդեցնում, անհագին հարայ-հրոց են հանում, թէ այս ինչ կամ այն ինչ գործը սկսում ենք. ինչ փոյթ, որ սկսած գործը երկար կեանք չի ունենայ, միայն թէ... Բայց Շուշու ջուլհակութեան արհեստանոցը բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում։ Նա ամբողջ մի տարի է իր գործը առաջ է տանում՝ շատ կանոնաւոր, առանց աղմուկի, առանց հարայ-հրոցի ու փքուն ճառերի, ունենալով մի սկզբունք՝ գործ ու գործ։

Գործը արհեստանոցներում դրված է հաստատ հիմունքների վրա և փառաւոր ապագայ է խոստանում։ Աև այժմ արհեստանոցում գործվում են՝ գորգեր—պարսկական, հայկական, թուրքմէնական և այլ ճաշակներով, дарожка-ներ, սրբիչներ և սփռոցներ։ Արհեստանոցը աշխատելու է մետաքսէ կտորների գործելութիւնը կատարելագործել, որով կարողանար մըցել Ռուսաստանում գործվող մետաքսէ կտորների հետ։ Արհեստանոցը, հակառակ իր ցանկութեան, քիչ բանուորուհիներ ունի. և դրա միակ պատճառը նիւթականն է։ Արհեստանոցը թէև խախուտ հիմունքների վրա չէ դրված և գործը կանոնաւոր առաջ է տանվում, բայց նիւթականի պակասութիւնը կարող է վտանգ սպառնալ։ Եւ. որպէսզի այդ հանրօգուտ գործը չը վտանգվի, պէտք է փութապէս նրան օգնութեան հասնել, որի համար մեր հայրենասէրների ուշադրութիւնն եմ հրաւիրում։

Արհեստանոցի ձեռնարկողները, որ մի քանի շուշեցի տիկիններ են, շնորհակալութեան արժանի են, և մենք ի բոլոր սրտէ ցանկանում ենք աջողութիւն։

Միայն մի բան՝ «Ջուլհակութեան դպրոց» չէ սազում. աւելի լաւ էր «Ջուլհակութեան դպրոց-արհեստանոց» անուանել։

Տ

Տող, մարտի 16-ին

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մարտի 16-ին

Ցայտնի առողջական գուշակութիւնը աշխարհիս վերջի մօտենալու մասին տեղական նախապաշարված կանանց և օրիորդների մէջ մեծ իրարանցում է առաջ բերել։

«Զօլակ» անուանեալ ուխտատեղին, որ գտնվում է քաղաքից մօտ 3 վերստ հեռաւորութեան վրա և որը թուրք-հայկական կռուածից յետոյ կորցրել էր հմայքի հետ միասին ուխտաւորների անհագին բազմութիւն, վերջին օրերս իր պարիսպների մէջ է գրաւել հաւատացեալ բազմութեան անհագին քանակութիւն։

Անցեալ օրը լուր տարածվեց, որ այնտեղ է գնացել յայտնի ընկնաւոր և խարխլաւ Գիւլզանը։ Լուրն առնելուն պէս Զօլակի եկեղեցում հաւաքվել էր մօտ 2000 կանանց մի անհագին բազմութիւն։

Այդ օրը խարխլայ ընկնաւորը հազարաւոր հաւատացեալների ներկայութեամբ ուշաթափվում է, կանազան գուշակութիւններով անհաբեկումի առաջացնում նախապաշարված կանանց մէջ, որոնք, գալով քաղաք, տարածում են իրանց շրջաններում իրանց տեսած հրաշքի մասին։ Գիւլզանը գուշակել է, որ «սրբերը իր միջոցով յայտարարում են ամբողջ աշխարհին, որ մօտ օրերս աշխարհիս վերջն է լինելու, Աստուած բարկացել է անհաւատների վրա և ուզում է աշխարհս տակն ու վրա անել։ Աշխարհիս միակ փրկութիւնը և Աստուծոյ ու սրբերի աչքը դէպի մեզ քաղցրացնելու գլխաւոր միջոցը այն է, որ ուխտատեղում ծառայող ժամհար Սողոմոնին առատութեամբ «աջահամբոյր» տան. նա որ կայ՝ «Զօլակի» զուլն է, դրա շնորհիւ աշխարհիս վերջը մի քանի օրով յետաձգվում է. այս խօսքերը այս րոպէիս ինձ ասում են Մարիամ Աստուածածինը և միւս սրբերը»։

«Ինչպէս երկրիս թագաւորն ունի իր մինիստրները, զօրավարները և զօրքերը, նոյնպէս երկնային թագաւորն ունի իր զօրքերը ու զօրավարները»,—ասում է ընկնաւորը։

«Աստուած սաստիկ նեղացել է մարդկանց վրա, որ իրանց ճանապարհից դուրս են եկել և ուզում է մարդկանց պատժել ու աշխարհս վերջացնել։ Միակ աշխարհափրկութիւնը նրանումն է, ասում են ինձ սրբերը, որ մարդիկ իրանց նախկին հաւատին դառնան, սկսեն ժամ, պատարագ անել, պաս պահել և մատաղներ անել. ինձ պատուիրում են մեր բարեխնամ սրբերը, որ մոլորեալ ժողովրդին յայտնեմ։

«Երբ Աստուծոյ պատուէրները մարդիկ կը կատարեն, Աստուած յետ կը վերցնէ իր որոշումը, իսկ եթէ մարդիկ կը շարունակեն իրանց ճանապարհը, այն ժամանակ գալու է աշխարհիս վերջը»...

Այս բոլորը այն հետևանքը ունեցաւ, որ հաւատացեալ կանանց մի խմբակ սկսել է մատաղի համար փողերի ժողովարարութիւններ։

Այս բոլոր անհեթեթութիւնները կատարվում են նահանգական Գանձակ քաղաքում, քաղաքի քթի տակ գտնվող մի եկեղեցում, ուր մինչև օրս քահանաները ժողովրդին նախապաշարումների, սնոտիապաշտութիւնների մէջ են պահել և ներկայումս նրանց փոխարինում են խաւարի Գիւլզանները։

Եւ այդ հազարաւոր ամբոխի մէջ չէ գտնվել փոքր ի շատէ խելքը գլխին մի կին, որ բողոքէր այդ անամօթութեան դէմ։

Թէև սա էլ պէտք է ասել, որ բողոքողը կարող էր քարկոծվել հաւատացեալ կանանց ամբոխի կողմից։

Աւ. Սահակեան

Ց. Գ.—Ինչպէս պատմում են, ընկնաւորը յայտնի հռետոր է և գիտէ կանոնաւոր խօսել, մինչև անգամ տեղ տեղ գրաբար բառեր գործ ածել. նա առհասարակ խօսում է գրականական ոճով։

Նոյն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շնող գիւղ, 15 մարտի։—«Հացի պակասութիւն, սով, սերմացու չունենալը», անա միատեսակ բառերից բաղկացած մի համառօտ նախադասութիւն, առանց որի իր նամակը չէ կարող սկսել և ոչ մի գաւառական նամակագիր։ Արևան գնով ճարած կոպէկներով գիւղացին փամուտով ալիւր է գնում և դրանով քարշ տալիս իր կէս կուշտ, կէս քաղցած բազմանդամ ընտանիքի գոյութիւնը։ Կիսով չափ մխիթարական կը լինէր, եթէ այդ գնված ալիւրը գոնէ պէտքական լինէր։ Տեղական, հանգամանքներից օգտվող նորաբոյս «փօղրադչի»-ները, որովհետև ալիւր ծախում են փող աշխատելու միակ նպատակով, Ռուսաստանի քաղաքներից բերում են ալիւր, առանց նրա որակը աչքի առաջ ունենալու. որքան կարելի է էժան գնով, որը, շատ քիչ բացառութեամբ, դառն է լինում և միանգամայն անպէտք։

Անցեալներում, ինչպէս յիշած էի «Մշակում», մեր գիւղացիք ցանկալի համարեցին հաւաքական ուժով ալիւր և ցորեն բերելու, որևէ գիւղատնտեսի խորհրդակցութեամբ հասարակութեան փողով, բայց այդ էլ գլուխ չեկաւ, որովհետև կարապն ու խեցգետինը հաշտվել չը կարողացան... Գալով սերմացու հացահատիկներին, այն էլ, պէտք է ասել, անմխիթար վիճակի են ենթարկված։ Գիւղացիք առնում և ցանում են այնպիսի սերմացու, որի մասին ոչ մի տեղեկութիւն չունեն, հետևապէս և չը գիտեն էլ, թէ ինչպիսի արդիւնք կունենան, նոյնիսկ աջող հունձ ունենալու դէպքում։ Ցորեն վաճառողները, գոնէ այս դէպքում, պէտք է մոռանան իրանց «վաճառական» լինելը և էժանութիւնից հրապուրվելով՝ փտած սերմացու չը մատակարարեն գիւղացիներին միանգամայն ի վերև անելով նրանց առաջիկայ հունձերի վրա դրած այնքան մեծ յոյսերը։

Այստեղ ևս, ինչպէս և շրջակայ միւս գիւղերում, շատ քիչ են հետաքրքրվում ժամանակակից հրատապ հարցերով և իրանց շուրջը կատարվող երևոյթներով։ Հայկական համարեա բոլոր գիւղերում տարածված այս միատեսակ անտարբերութիւնը բացատրել նրանով, թէ գրագիտութիւնը չէ տարածված մեզանում, հիմնաւոր չէր լինի, որովհետև այդ նոյն անտարբերութիւնը ոչ պակաս չափով նկատվում է նաև այն գիւղերում, որտեղ գոյութիւն ունի ուսումնարան և գրագէտ ընթերցողի բաւարար թիւ։ Ինձ ուրեմն բացատրել մեզանում թագաւորող այս յետամնացութիւնը։ Իմ կարծիքով նրանով, որ գիւղերում ժողովրդի մէջ գտնվող գործիչները և կամ նրա հետ շփումն ունեցող քաղաքիները ոչ թէ մտածում են նրա մտաւորի մասին, առողջ և ճշգրիտ գաղափարներով զինելու մասին և կամ գրքի, լրագրի միջոցով ծանօթացնելով առօրեայ խնդիրների հետ, նրան ինքնագիտակցութեան բերելու մասին, այլ ամէն բան չափելով կուսակցական աչքերով՝ գերի են դառնում սեփական եսին, բորբոքում կրքերը և մէկը միւսի հակառակ առաջ մղում անձնական շահերը, մոռանալով որ ազգէտ, անգիտակից մասսայից տասնաւոր անգամ ունենալուց, երկու գիտակից անգամ ունենալն աւելի է օգտաւէտ հէնց այն կուսակցութեան, որի անունից մղվում են այդ պայքարները։

Գիւղական ուսուցիչը, ժողովրդի աւանդական այդ միակ անշահասէր բարեկամը, որ թշնամի պէտք է լինի իր շուրջը տիրող տգիտութեանը և իր կոչումով նրա առաջին բողոքաւորը, նա ևս կարծես, թող ների ինձ ասել, ինքն իրան դաւաճանել է սկսել։ Շնող գիւղը, որտեղից գրվում է այս նամակը, ունի երկու ուսուցիչ, որոնք, գիւղացիների վկայութեամբ, «շատ լաւ են սովորեցնում երեխաներին» և բարեխղճութեամբ կատարում իրանց պաշտօնը։ Սակայն չեմ ուզում հաւատալ, որ այս համեստ գովասանքը վիրաւորական չը լինի մեր ուսուցիչների համար... Թէև մեր օրերում ընդունված է լրատուներից խուսափել, բայց մեր ուսուցիչները (Շ. գիւղի մասին է խօսքս) թող չը նեղանան, եթէ ասելու լինեմ, որ նրանք դասերից դուրս մնացած իրանց այնքան մեծ ազատ ժամանակը խեղդում են պարապութեան մէջ, եթէ չը հաշվելու լինենք «զօխկաղների» վրա նստած մասլահաթները։ Կիրակնօրեայ գրական դասախօսութիւն մեծերի համար, յորդոր գիւղական փոքրիկ գրադարանի մասին, գիրք, լրագիր, գիւղացոց մտաւոր հորիզոնը մաքրող այս միջոցների մասին խօսելը, որ անընական կերպով կապված պէտք է լինի գիւղական ուսուցչի գործունէութեան հետ, մեր ուսուցիչների համար գոյութիւն չունի և նրանք հանդիստ հոգով եօլա են գնում գիւղում տասցվող մի հատիկ լրագրով միայն... այն էլ կարծեմ «փէշքաշ» ուղարկվող...

Հաւատամ, պարզեօք, որ երկու ուսուցչի կարուութիւն ունեցող գիւղը դէմ կը գնայ գիրք-լրագրի տարածման, եթէ ուսուցիչները, դուրս գալով իրանց այսքան նեղ շրջանակում սահմանափակված գործունէութիւնից, պահանջ դարձնեն նրա մէջ այդ գաղափարը...

Բագրատ Մկրտումեանց

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Նամակ խմբագրութեան)

Անցեալ տարվայ «Զանգ» և «Մշակ» լրագիրների յուլիս և օգոստոսի համարներում Ներսիսեան դպրոցի նորընտիր հոգաբարձութիւնը անվերջ յայտարարում էր, թէ այս ուսումնական տարվայ սկզբին բացվում է դպրոցին կից VII մանկավարժական դասարան, որտեղ ընդունվում են միայն հայոց միջնակարգ դպրոց աւարտողները և որտեղ անցնելու են հետևեալ առարկաները. գործնական և տեսական մանկավարժութիւն, հոգեբանութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, ընդհանուր գրականութիւն, սօցիօլօգիա, քաղաքատնտեսութիւն և ձեռարուեստ։

Արտաքուստ շատ բան ասվեց՝ շատ բան խոստացվեց, բայց այժմ տեսնենք ինչ կայ ներքուստ։ Ինչպէս է իրականանում այս ըստ քանակի և ըստ որակի մեծազդորդ ծրագիրը, որը հրապուրելով ու դէպի ինքը քաշելով ամբողջ 60 հոգի երիտասարդներ՝ ինչպէս բաւարարութիւն տուեց նրանց ուսումնատենչ ծարաւին և ինչ տեսակ «պատրաստեց» ժողովրդի ու նրա մանուկ սերնդի համար համեստ հասարակական գործիչներ։

Սակայն մեր նպատակը չէ քննադատել VII դասարանի վերաբերեալ հոգաբարձութեան գործունէութիւնը, այլ մենք շեշտելով միմիայն իրականութիւնը ու փաստերը՝ ուզում ենք հասարակութեան առաջ դնել իրանց հիմնարկութեան այս մասի ամբողջ պատկերը։

Սեպտեմբերի սկզբներին բոլոր ուսանողներս արդէն եկած էինք Թիֆլիս և սպասում էինք պարապմունքներին. շուտով իմացանք և այն, որ մեզ համար տեսուչ է նշանակված «յայտնի մանկավարժ» պ. Յ. Տէր-Միրաքեանը։ Մենք անվերջ ուրախանալով հանդիսաւոր պատրաստվում էինք առաւել ևս մեծ եռանդով սկսել մեր աշխատանքները։

Բայց ինչ... օրեր օրերի ետևից անցնում էին և մեզ ոչ ոք հրաւիրող չը կար ուսումը սկսելու։

Մենք անվերջ հարցնում էինք, թէ ժամանակը մեզ համար թանգ է, վերջապէս երբ պէտք է սկսել աշխատանքները։

Պ. Տէր-Միրաքեանը զանազան պատճառաբանութիւններ բերելով ձգձգում էր պարապմունքները այսօրվան ու վաղվան։

Իսկ մենք ի նկատի ունենալով «բեղմնաւոր մեր ապագան» լռում ու համբերում էինք։

Այսպէս անցաւ սեպտեմբեր ամիսը։ Յուսախաբ «ուսանողներս» միշտ «մեծ յոյսեր» շոյլած թափառում էինք Երևանեան հրապարակում կամ Ներսիսեան դպրոցի գաւիթում ու պատշգամբներում և այսպիսով սպասում VII դասարանի բացմանը։ «Ուսանողութիւնը» հիասթափվեց, սկսեց աւելի մեծ թափով բողոքելու տրտունջներ յայտնել։ Վերջապէս, երևի մեր աչքերին թող փչելու համար հոկտեմբերի 5-ին հրաւիրեցին մեզ Սօլօլակ, որտեղ գտնվում էր VII աչքակապուկ մասնագիտական դասարանը։ Պէտք է ասել, որ այս բնակարանում դեռ նոյնիսկ ռեմօնտներն անգամ չէին վերջացած, հետևապէս մենք պէտք է նորից կորցնէինք մեր ժամանակները։ Մեզ մի կերպ տեղաւորեցին de facto ուսուցչանոցում։ Ներսիսեան դպրոցի այն ժամանակվայ նոր հրաւիրված վերատեսուչ պ. Ս. Տիգրանեանը, որը այժմ անդամ է Պետական Դումայի, բացեց VII դասարանը, ի միջի այլոց ասելով՝ «Մեր այսպէս ասած VII դասարանը, լսարանը հաշւում է բարձրագոյն դպրոցի ստորին բաժանմունքը և ուրեմն բարձր պէտք է համարել միջնակարգ դպրոցներից, այստեղ աւանդվելու են միմիայն գիտութիւններ» և այլն և այլն։

Հիմա անցնենք պարապմունքներին։

Մենք կարծում էինք, թէ ինչպէս ամէն մի լսարանում կամ համալսարանում, այնպէս և այստեղ պէտք է մտցնէին և համապատասխան համալսարանական կարգ ու կանոն, դասախօսութեան եղանակ, կարգապահութեան վերաբերեալ պարտադիր օրէնքներ և բացի դրանցից լեկտօրներ կը լինեն ոչ թէ սրանց նման համարեա ապիկար դասախօսներ, այլ կարգին և փորձված մասնագէտներ, ինչպէս էին պ. Ս. Տիգրանեանը հոգեբանութիւնից և պ. Մ. Յովհաննիսեանը սօցիօլօգիայից։

Իսկ այստեղ մեր լսարանում բառի բուն նշանակութեամբ ոչ մի կարգաւորութիւն չը կար. տիրում էր կարգին քաօս։ Դասացուցակ դեռ գոյութիւն չունէր և ուրեմն չէր էլ կարելի իմանալ, թէ այսօր ինչ լեկցիաներ պիտի խօսվեն և քանի դաս է լինելու՝ մէկ, երկու, թէ երեք. մեզ յատկացրած սենեակը դեռ վերանորոգված չէր, այնպէս որ մի առ ժամանակ դասախօսութիւնները կատարվում էին պատշգամբում. աւանդվելիք առարկաների ծրագրերն էլ մշակված չէին, և նոյնիսկ մեզ հետ և իրանք հոգաբարձուները չը գիտէին և դեռ հիմա էլ չեն իմանում, թէ ո՛ր առարկայից ինչ չափ, ինչ ծաւալով են անցնելու դասախօսները. մանկավարժութեան գործնականի համար էլ խոստացած վարժապատրաստականները դեռ չը կային, որոնց վրա օպերացիաներ պիտի կատարէինք, կամ եթէ նոյեմբերի վերջերը այս վարժոցները թէև եղան, բայց որ մեզ դեռ թոյլատրված չէր յաճախել... լեկցիաների մի մասի կօնսպեկտները մեզ տալու դեռ չը կար, այնպէս որ այդ լեկցիաները միայն մնում էին «ձայն բարբառոյ յանապատի»։

Այսպէս ուրեմն անցաւ և հոկտեմբեր ամիսը։

Վերջապէս մենք ուժգին կերպով հրաժարվեցինք, թօթափեցինք մեր ոտներից համբերութեան փոշին և խիստ կերպով բողոքեցինք հոգաբարձութեան ու տեսուչ պ. Տէր-Միրաքեանի դէմ, որ նրանք մեզ դարձրել են իբրև խաղալիք, ման են ածում մեզ իրանց մատների վրա, ինչ որ փորձեր են կատարում մեզ վրա, ինչպէս մի անգամ երևի սխալմամբ դուրս թռաւ պ. Տէր-Միրաքեանի բերանից։ Բողոքին գլխաւորապէս առիթ տուողը հետևեալներն էին. որ 1) մինչև նոյեմբեր ամիսը հակառակ հոգաբարձութեան յայտարարութեան չէր մտցրված փիլիսոփայութեան պատմութիւն, 2) մանկավարժութիւնից շնորհիւ հոգաբարձութեան հաւանած և ամենից առաջ հրաւիրված մեր «մանկավարժի» անկանոն դասախօսութիւններին, որ մինչև նոյեմբեր ամիսը ոչինչ չէինք անցել թէ թէօրիայից և թէ պրակտիկայից և 3) դասատուները չունէին որոշ համապատասխան դասաւանդութեան սիստեմ։ Նոյնիսկ մեզանից շատերը պահանջում էին հեռացնել դպրոցից դասախօսներին, որոնք պէտք է մեզանից միմիայն ժամանակ խլէին։

Բողոքի ձայնը հասաւ և մեր «հեռատես» հոգաբարձութեանը։ Շուտով եկան հոգաբարձութիւնից ներկայացուցիչներ յանձին պ. պ. Թոփչեանի, Թումանեանի և Սահակեանի։ Նրանք ուզում էին իրողութեան հետ անձամբ ծանօթանալ (կարծես թէ չը գիտէին), իմանալ դժգոհութեան պատճառները և երևի ըստ այդմ էլ «ալեզանի դնել» մեր խոր վէրքերին։ Այս պարոնները, ի հարկէ լաւ ծանօթանալով ամէն բանի հետ, դիմեցին՝ գիտէք ինչի... շողոքորթութեան, բայց իզուր... վաղված ուսանողութիւնը չը խաբվեց, այլ ընդհակառակը ցոյց տուեց միայն թղթի վրա գրած իրանց աշխարհահռչակ փիլիսոփայութիւնները և իրականութեան մէջ կատարած ոչինչը։

Այսպէս մեր միանգամայն իրաւացի բողոքը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»։ Միայն դասախօսները սկսեցին տալ մեզ լեկցիաների կարգին կօնսպեկտներ։

Եւ այսպէս այս տեսակ տարաձայնութիւնների ու դժգոհութիւնների տարափի տակ անցան նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսները։ «Ուսանողութիւնը» կամ այսպէս ասած ուսուցչացուները կորցրին իրանց եռանդը. ի դերև ելան նրանց փայփայած յոյսերը, երես դարձրին այս «հռչակաւոր» դասարանից և ուղղակի ընկան անտարբերութեան մեռած ովկիանը։ Յուսախաբութիւնը կատարեալ էր։ «Ուսանողութեան» մի մասը արդէն թողեց այս VII օպերացիայի դասարանը ու նախատելով ձեռնարկողներին՝ հեռացաւ։

Պէտք է աւելացնել, որ դեկտեմբերի սկզբներին դեռ նոր թոյլատրվեց մեզ յաճախել դասերին պրակտիկայի համար։ Բայց ինչ... հրաւիրել են մեզ նման անփորձ, մանկավարժութիւնից շատ քիչ տեղեկութիւն ունեցող (բացի մէկից) ուսուցիչներ։ Եւ անա մենք պէտք է նրանց դասերին գնայինք գործնական մանկավարժութեան համար։

Եւ այստեղ յուսախաբութիւն և լքումն... (Վերոյիշեալ պրակտիկաններն գործնական մանկավարժութիւնը անցնում էին և այժմ էլ անցնում են Գօլօվինսկիյ պրօսպեկտում և Երևանեան հրապարակում)։

Երկու երեք շաբաթից յետոյ, երևի այս բանի առաջն առնելու համար պ. Տէր-Միրաքեանը հրաւիրեց մեզ հերթով դաս տալ, և այսպէս մենք էլ մեր կողմից սկսեցինք օպերացիա կատարել—ճ... մ... մանուկների, մատաղ սերունդի վրա։

Մինչև հիմա էլ դեռ այս տեսակ է ընթանում. 5—10 ուսուցչացուներ լինում են վարժոցում, իսկ մնացածները ցրիւ եկած։

Մենք այլևս չը բողոքեցինք, որովհետև հաստատ համոզված էինք, որ մեր բողոքը նորից պէտք է անտարբերութեան ծովը գցվէր։

Վերջապէս հասանք դեկտեմբերի 20-ին։ Ցօղնածննդեան արձակեցին մինչև յունվարի 8-ը, որից յետոյ տարածված քութէշի պատճառով արձակեցին նաև 8 օր։ Շուտով իմացանք, որ սօցիօլօգիայի ուսուցիչ պարոն Մ. Յովհաննիսեանն էլ մեզ անյայտ պատճառներով հրաժարվել է։

Հիմա մարդ ինչպէս անտես լինի այս տեսակ իրականութեան առաջ, ինչպէս լաւ, երբ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը այլասեռում է մեր ամբողջ միտքը և սիրտը։ Նա դարձրել է մեզ իրան համար մի պաճուճանք, նա փորձեր է կատարում մեզ վրա, վերջապէս ինչու համար կորցնել տուեց նա մեզ համար մեր մի ամբողջ ուսման տարին։ Թող պատասխանեն մեզ պ. պ. ընտրեալ հոգաբարձուները։

1. Մանկավարժութեան թէօրիայից ոչինչ դեռ չենք անցել, թէև իբր թէ պ. Տէր-Միրաքեանը միշտ դասախօսում է։ Մինչև հիմա հազիւ պահանջել մեզանից՝ քաւ լիցի՝ չէ եղել։ Իսկ պրակտիկայից կոյրերի նման «ածմըծել» հազիւ կարողանում ենք ճանապարհ գտնել։

2. Հոգեբանութեան լեկտօրը, ինչպէս ասացի, գնաց, իսկ դրա տեղը անա մի ամիս և կէս է դասատու չունենք։ Սրա պարապ դասերին ամբողջ 49 հոգի փողոցներում է թափառում։

3. Փիլիսոփայութեան պատմութիւն դեռ ի սկզբանէ անտի չը կար։ Նա միայն հրատարակվեց մամուլի էջերում։

4. Ընդհանուր գրականութիւնից անցնում ենք անգլիական գրականութիւն։ Պ. Հոգաբարձութիւն և պ. Տեսուչ, սա ընդհանուր է, չէ՞... և ինչու սկսել անգլիականից և ոչ չինականից կամ բաբելականից, երբ մենք ոչ ռուսաց գրականութիւնը գիտենք և ոչ հայկականը։

5. Քաղաքատնտեսութիւնից դեռ պարապմունքներ սկզբից պարապում է պ. Խաժակեանը, որը մի կերպ բաւարարութիւն է տալիս մեզ։

6. Իսկ սօցիօլօգիան, երբ պ. Մ. Յովհաննիսեանը թողեց, այնուհետև մօտ երկու շաբաթ մնացինք առանց դասախօսի։ Վերջերս առանձնեց այդ առարկան էլ պ. Խաժակեանը։ Վերջինս միշտ խառնում է սօցիօլօգիան քաղաքատնտեսութեան հետ, այնպէս որ ոչ ոք չէ կարող որոշել, թէ դա առաջինն է, թէ երկրորդը։

7. Գալով ձեռարուեստին, պէտք է ասել, որ սա էլ արժանացաւ նոյն պատուին, ինչպէս փիլիսոփայութեան պատմութիւնը։

Լսարանում ոչ մի կարգապահութիւն, ոչ մի սիստեմ չը կայ, որը պարտադիր լինէր ուսանողութեան համար։ Կամայականութիւնները անսահման են։

Սակայն ուսանողութեան մի մասը փնտռնտելով ժամանակը, նուիրվել է ինքնաշխատութեան։ Սրանք ցանկանում են, որ գոնէ այս միջոցով քիչ թէ շատ արդարացնեն իրանց վրա դրած յոյսերը և հանգիստ խղճով վերադառնան հայրենիք։

Մի-Ջա-կէտ

ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ «ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ»

Մի մարդու աղջիկներից մէկը մանում է իրանց ջրհորի մէջ. տնեցիք որքան խնդրում, սպառնում են, բայց նա ասում է. «Մինչև սիրած տղէն չը գայ, ես դուրս ելնողը չեմ»։ Գալիս է տղէն և աղջկան հանում է...

Տղէն իր միւս ընկերի հետ համոզում են աղջիկներին (երկու քոյրերին), որ շուտով աշխարհի վերջն է, ինչու իրանք իրանց մուրազներին չը հասած մեռնեն, և հրաւիրում են նրանց բաղանիք։ Համոզվում է և աղջիկների մայրը, ճերմակեղէն կապոց նրանց տալով՝ զգուշացնում է շուտանալու։ Անցնում է 2—3 օր, աղջիկների հայրը նրանց գտնում է բաղանիքում. գանգատվում է հոգևոր կառավարութեան. վերջինս կանչում է բոլորին, երիտասարդներին նախատում է և պատուիրում, որ աղջիկներն իրանց մօտ մնան մինչև պսակի օրը գալը։ «Դէ, հօր ձեռքը համբուրեցէք, որ նա բաշխի»,—ասում է հոգ. կառավարութիւնը։ Երիտասարդները հօր ձեռքն են համբուրում, հայրն էլ իր հերթին նրանց ճակատն է համբուրում «շատ ապրէք որդիքս» ասելով և այսպիսով բարիշում են....

—

Իր կեանքն անբարոյական տեղեր մաշելով, գործ անելուց փախչող և պարապութիւն սիրող Մարտիրոսն ապրում էր վերջին օրերս իր աղջկա, ցամաք հացի կարօտ փեսայի մօտ։

Ամսիս 17-ի գիշերը նրա փեսան յայտնում է, որ ուրիշներից ստացած ողորմութիւնով այլևս անկարող է մի աւելորդ բողազ էլ պահել և խնդրում է Մարտիրոսին վաղվանից իրանց տուն չը գալ։

Բարեբարների հաւաքած փողով նրանք ալիւր են գնում և ուզում են այդ գիշեր հաց թխել։ Առաւօտեան ժամը 6-ին քոյրը խնդրում է Մարտիրոսին գնալ թոնդիր, կամ եկեղեցի և կամ որևէ տեղ, որ կարելի լինի խմորի փնջակները փոքրիկ սենեակում տեղաւորել։ Մարտիրոսը բարկանում է, որ այսքան վաղ են իրան տանից վռնդում. քրօջը քաշում է դէպի դուռը և դանակը խրում կրծքին. մօտենում է փեսային և դանակի երկու հարուածով նրան գետին գլորում, յետոյ դանակը խրում է փեսայի քրոջ աղջկայ ծծի տակից. վերջինիս եղբայրը գոռալով դուրս է փախչում. այդ ժամանակ հարևան նալբանդ Ենօվքի կինը կարծելով թէ երկրաշարժ է ու աշխարհի վերջը սկսվում է, դուրս է գալիս բան իմանալու և տեսնում է Մարտիրոսին երեխայի ետևից ընկած. «Այ փչացած, ինչ կուզես էդ երեխից» ասելով սկսում է բռնել պատուհանների դռները, իսկ Մարտիրոսը երեխային անշնչացնելուց յետոյ հասնում է Ենօվքի կնոջ վրա ու դանակը կողքը խրում. «վա՜յ, վա՜յ, մեռայ» կանչում է կինը ամուսնուն և ընկնում. կնոջ ձայնից Ենօվքը զարթնում է և քնաթաթախ շտապում դուրս և տեսնելով իր աչքի մի մարդու, անմիջապէս բռնում է, դարկում գետնին. այդ մօմենտին դանակով Մարտիրոսը Ենօվքի փորն է խառնում։ «Վայ, հարսս, տղաս» գոռալով Ենօվքի մայրն է գալիս. դանակի մի քանի հարուածներով սպանվում է և նա։

Այնուհետև Մարտիրոսը փորձում է մտնել ուրիշ հարևանների տներ, բայց չէ աջողվում, և սպանելու մարդ չը գտնելով՝ դանակը խրում է իր կողքը։

Երկու ժամից յետոյ հազիւ համնում են ոստիկանները և կիսակենդանիներին տանում հիւանդանոց, որտեղ մեռնում են։

Ի՞նչ անենք. մի քանի րօպէի մէջ սպանվում են ութ հոգի։

Ո՞ւթ մարդ։

Ում մեղադրել—չը գիտեմ։ Բայց երբևիցէ մեր հասարակութիւնը հարց կը տայ իրան, թէ ծմ սպանեց ութ հոգու և ինչու համար։

Նոյն գիշեր չարագործները «ռուս Անտօնի» կնոջ ոսկիներն են փախցրել։

Նոյն գիշեր շատ գեղեր ամբողջովին գիշեր դուրս են լուսացրել։

Ահա այսպէս անցաւ մեզանում «աշխարհի վերջը»։

Տ. Բ.

Մարտի 19-ին

ԽԱՐԲԻՆԻ ՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

Հրաշագործ Խարբինը ընկաւ ու փշրվեց, այլ եւս չը կայ ոչ առևտուր և ոչ էլ աշխատանք։ Եթէ առաջներում մարդիկ վազում էին այնտեղ, այժմս ընդհակառակը փախչում են այդ քաղաքից։ Շատերը գնացել ու հեռացել են արդէն։ Խարբինում գտնվող հայերի դրութիւնը և նրանց գործերը կատարեալ աննախանձելի են, ակամայ պիտի հեռանան այնտեղից և աշխատեն ապրուստի միջոցներ գտնել այլ տեղ։ Ահա հէնց այսպիսի մի ժամանակ Խարբինի հայերը առաջ են բերել մի շատ կարևոր հարց, այն է՝ պահանջում են մի քանի մարդկանցից հասարակական փողերի (16700 րուբլի) հաշիւները։ Օրվայ հրատապ հարցերից մէկն է դառել այդ։ Հասարակական ժողովներում եղել են հարցապնդումներ, ծանր գրոյցներ և մինչև անգամ վիրաւորանք։ Վերջապէս հասարակութիւնը գալիս է հետևեալ որոշման. ընտրում է 4 անդամներից բաղկացած մի յանձնաժողով, որը պիտի քրքրէ ու պարզէ բոլոր հաշիւները և յետոյ հաստատ տեղեկութիւններ տայ հասարակութեանը։

Խարբինի բարեմիտ հայերի այս ձեռնարկութիւնը և պահանջը գովելի է և խրախուսելի։ Հասարակութիւնից ընտրվածները հաշիւ տալ չը գիտէին և երևի աւելորդ բան էին համարում։ Հասարակութիւնը կատարեալ իրաւացի է։ Ոչ ոք իրաւունք չունի նեղանալու, եթէ նրանից այս կամ այն հաշիւն են պահանջում։ Ինչու մեզանից խուսափողները չիմանայ, թէ ուր է գնացել իր տուած օժանդակութիւնը։ Ինչու բոլորս չիմանանք, թէ ընտրված մարդկանցից ծմ է եղել պարտաճանաչը և ծմ է եղել անիրաւը ու անպիտանը։ Ափսոս միայն, որ խարբինցիք վճռական կերպով չէին պահանջում այն ժամանակ, երբ դեռ շատերը չէին ցրվել։ Ճշմարիտ է, եղել է խօսք, հաշիւներ տալու կարևորութեան մասին, բայց գործի գլուխ կանգնած մարդիկ այսօր, էգուց ասելով և այլ անհիմն պատճառաբանութիւններով թողել են գործը մինչև այսօր։

Կանգ առնենք մի քիչ, Խարբինի հայ հասարակութեան ընտրած կոմիսիան (որի մէջ կայ և իրաւագէտ մարդ) պարտաւոր է ոչ թէ ել ու մուտքի լոկ հաշուետուութեամբ պարապել, մէկը միւսից հանելով ասէ, ահա ձեզ, թէ ինչ ունէիք և ո՞րքան է մնացել։ Այսքանը հերիք չէ, հասարակութիւնը աւելին է պահանջում, նա աշխատում է հաշիւները իմանալ, հասկանալ և գնահատել հասարակական գործիչներին ըստ արժանւոյն։ Ուստի յանձնաժողովը պիտի աշխատէ երևան հանել իրողութիւնը, որպէս զի հասարակութիւնը կարողանայ առանց տատանվելու ասել իր դատավճիռը։ Հետևապէս առանձին ուշադրութեան արժանի են 1904 և 1905 թւականները և այդ ժամանակի գործիչները։ Ի դէպս է, ինչ առնչութիւն ունէր այդ գործերում ամբողջ Սիբիրիայի հովիւ տէր-Արիստակէս Խէչեանը։ Մանջուրիայի քարոզիչ Ընձակ վարդապետի երևալը։ Նրա և նրա արբանեակների, մանաւանդ մի հայ օֆիցերի սխրագործութիւնները և հասարակական փողերի անմիտ ու անխնայ վատնելը։ Ի՞նչն էր պատճառը, որ վարդապետը փառաւոր ընդունվեց, բայց անշուք կնաց։ Խարբինի Դաշնակցութեան ներկայացուցիչը։ Ծխ...ում է սուտ և ինքնակոչ «դաշնակցութեան Խարբինի կոմիտեար», Սուտ կոմիտեի դատերը, տուգանքներ առնելը, ծեծելը (տխրահռչակ Սողոմոնը ինչպէս էր սրանց մօտ), նախագահի մատաղացու ոչխարի գողանալը (հայերն էին մատաղ արել), և մի քանի գումարների կուլ գնալը։ Կօմիտեի գրաւոր վճիռները, իբրև նրա բարոյական սնանկութեան նմուշներ։

Կօմիսիայի մատուցած ծառայութիւնը կը լինի մեծ և շատ օգտաւէտ։ Նա պարտական է հրատարակել իր աշխատանքի հետևանքը, որով կը զգուշացնէ շատերին։ Նախօրօք գիտեմ, որ յանձնաժողովը պիտի հանդիպի մի շարք դժուարութիւնների, նուրբ հարցերի. անկասկած պիտի տեսնէ մի շարք մէկը միւսից վատ հայեր, որոնք հասարակական գործիչներ լինելով գողանում, լափում ու փչացնում էին հասարակութեան փողերը։ Այնուամենայնիւ թող շատ հայեր, մինչև անգամ ամբողջ հայութիւնը իմանայ իր վատ զաւակներին, որոնք ցաւ ու ցեց են դառել։ Չէ՞ որ այսօր կամ վաղը անտարի Խարբինի հայ հարուստները եւս պիտի ցրվեն, գնան ու նորից ժանեն հայի ծոցը։ Չէ՞ որ նրանք առանց հայի արևան չեն կարող ապրել։ Թող անպիտան, կեղծաւոր և շահամոլ հայը այլ եւս չը ժանէ հասարակական ասպարէզ և նորից չը կեղեքէ իրան հաւատացողներին։ Եթէ մենք ցանկանում ենք ապրել, աշխատում ենք բարի անուն վաստակել, եթէ ճիգ ենք թափում ուրիշներից յետ չը մնալ և արթուն նստած սպասում ենք ապատարար լուսածագին, որ ինչ է մի բարեվայել օր ու կեանք քաշենք, մենք պիտի աշխատենք զէնը շպրտել մեր հրէշանման գործիչներին և խորտակել նրանց առ միշտ։

Տէր-Եղիազարեան

Օմսկ, մարտի 5-ին

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 16-ին

Խնդրեմ այս նամակին տեղ տաք «Մշակի» մերձակայ համարներից մէկում, որպէս պատասխան Թաւրիզից գրված պ. Իրօ-ի թղթակցութեան։

Շատ անգամներ առիթ եմ ունեցել կարդալու «Մշակի» էջերում զանազան անձնաւորութիւնների կողմից վայնասուններ «Հնչակեանների սխրագործութիւնների» մասին և քանիցս անգամ հէնց «Մշակի» միջոցով հարց եմ տուել Թղթակից պարոններին գէթ մի փաստ բերել, որը ցոյց տար այդ մեղադրանքների ճշմարտութիւնը, բայց միշտ մնացել եմ անպատասխան։

Ի նկատի ունենալով բոլորը, եկել եմ այն եզրակացութեան, որ այդ տեսլի մարդկանց նպատակն է միայն և միայն անուանարկել Հնչակեան սօց.-դեմ. կուսակցութիւնը, սակայն ցոյց չը տալով այդ կուսակցութեան որևէ բացասական կողմը։ Կարդալով պ. Իրօ-ի սուտերով և զրպարտութիւններով լի նամակը, եկայ այն տխուր եզրակացութեան, որ սա էլ հնչակեանների երդուեալ հակառակորդներից մէկը լինելով, իր բարոյական պարտքն է համարում միւսների նման անուանարկել հնչակեաններին, արդարացնելով հէնց իր առաջ բերած ասացուածքը իր և իրան նմանների վերաբերմամբ թէ՝ «ի խորտակեղն բարւոյն, մերայանին չարք»։

Ըստ պ. Իրօ-ի կարիք չը կար համերաշխութեան Դաշնակցութեան հետ, այլ լաւ կը լինէր, որ Դաշնակցութեան անունից խօսող զանազան աւանտիւրիստների և աֆէրիստների ձեռքով հնչակեան մարտիկները ոչնչանային և հնչակեանների կողմից ընդդիմադրութեան և ինքնապաշտպանութեան չը հանդիպէին։

Ստորութիւն է ասել, թէ հնչակեանները համերաշխութեան դաշինք են կռել Դաշնակցութեան հետ, աւելի լաւ շահագործելու համար ժողովրդին։

Անուանարկել մի կուսակցութիւն, որը արտաքսել է Մուրադների, Ժիրայրների նման հսկաներ, հէնց միայն նրա համար, որ նա հանդգնութիւն է դիմել և հասարակութեան միջից փող հաւաքել, աններելի ստորութիւն է։

Աշխարհիս մէջ չը կայ ոչ մի սօցիալիստական և յեղափոխական կուսակցութիւն, որը հանգանակութիւն չանէր հասարակութեան մէջ։

Արդ, միթէ Հնչ. ս.-դ. կուսակցութիւնը պէտք է լինի, որ բացառութիւն պիտի կազմէր բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների մէջ, մանաւանդ ներկայումս, երբ այդ կուսակցութիւնը կանգնած է ակտիվ գործունէութեան և կուռի ուղիի վրա ու իր պարտականութիւնն է համարում պաշտպանել հայ ժողովուրդը զանազան արհաւիրքներից և հօրդաների արշաւանքներից։ Խօսել ժողովրդի անունից կոկորդիլոսի արցունքներ թափելով և աշխատել մոլորեցնել հասարակութիւնը, որի գիտակից մասի մէջ Հնչ. ս.-դ. կուսակցութիւնը յարգանք և համակրանք է վայելում, իմ կարծիքով պրովօկատորութիւն է։

Այո, «ժողովրդի աչքերը բացվել են» և նա է, որ արժանի կերպով կը գնահատի պ. Իրօ-ի նման յօդուածագիրներին և ոչ թէ կը զինվի հնչակեանների դէմ, որը պաշտպանել է, պաշտպանում է և պիտի պաշտպանէ հայ ժողովրդի կեանքը, գոյքը և պատիւը զանազան բռնութիւններից։ Sapienti sat.

Artemius

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղքատների օգտին ստացանք. 1) Երևանից—Արզուքան Արզարեանի ծննդեան տարեդարձին Աստուածատուր Ազարեանի միջոցով ժողոված 9 ր., 2) Եկատերինօդարից—տաճկահպատակ Աւետիս Մեղրիկեանից Արսէն քահանայ Վարդանեանի միջոցով 15 ր.։

—

Կովկասի Փոխարքայի խորհուրդը անհրաժեշտ համարեց բացատրել Բաթումի շրջանի զինուորական նահանգապետին, որ այդ շրջանի տեղացիները քաղաքացիական բոլոր գործերում, բացի նրանցից, որոնք վերաբերում են հողային սեփականութեան խնդիրներին, իրանց խնդիրների լուծումը ակնկալելու են տեղական ժողովրդական դատարաններից։

—

Հայ-Թուրքական ընդհարումներից առաջացած վնասները Երևանեան նահանգում, իրանց վնասվողները հաշւում են 6 միլիոն րուբլի, իսկ առանձին մասնաժողովը—մինչև 4 միլ. րուբլի։

—

Էջմիածնից հրաւիրված է Գարեգին վարդապետ Յովսէփեանը՝ Վանքում քարոզելու համար։

—

Թիֆլիս է եկել Միխայլօվսկի բերդի հրամանատար գեներալ-մայոր Ալֆտանը։

—

Դոնապան Խաչատրեանի սպանութեան մէջ կասկածվող Երամեանցը պատերազմա-դաշտային դատարանի վճռով դատապարտվել է գնդակահարութեան, իսկ նրա հետ միասին խանութ կողոպտող Դեգտերեվը—15-ամեայ տաժանակիր աշխատանքների։ Պատերազմա-դատարանի մահվան դատավճիռը գործադրվել է մարտի 17-ին։

—

Իշխան Կօն. Ի. Խերխէուլիձէին գեներալ-նահանգապետը թոյլատրել է վերստին սկսել դադարեցրած «Тифлисъ» լրագրի հրատարակութիւնը։

—

Ապրիլի 1-ից ելէքտրաքարշը երթեւեկելու է մինչև գիշերվայ 12-ը։

—

Թիֆլիսի ըէալական դպրոցի իշխանութիւնը յայտարարել է, որ այդ դպրոցի 6-րդ և 7-րդ դասարանները Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ փակվում են մինչև գալիք կրթական տարվայ սկիզբը։ Այդ երկու դասարանների արձակված աշակերտներից նրանք, որոնք կը ցանկանան քննութիւն տալ իբրև դրսի մարդիկ, պէտք է խնդրագրեր ներկայացնեն մինչև մարտի 20-ը։ Այդ աշակերտները քննութիւն են տալու մինիստրական ծրագրով, ինչպէս Թիֆլիսում, այնպէս և այլ քաղաքներում։ Յիշեալ ծրագրով քննութիւն տալու ժամանակ իբրև ասիստենտներ հրաւիրվելու են տեղական միջնակարգ դպրոցների դասատուները։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը վճռել է ինքնուրոյն քննել գալիք տարվայ քաղաքի ծախքերի նախահաշիւը, որովհետև ֆինանսական մասնաժողովի հետ միասին քննելը ծնում են միայն անպտուղ վիճաբանութիւններ։

—

Մարտի 18-ի երեկոյեան Աւճալեան և Բէյգուդօրսկի փողոցների անկիւնում, Նախալօվկայում, երեք անյայտ չարագործներ 3 անգամ կրակում են Ս. Դիվլիի գինետան մէջ նստողներին, սակայն ոչ ոքի չեն վիրաւորում։ Դրանից յետոյ նետվում է մի ռումբ, որը նոյնպէս ոչ ոքի վնաս չէ հասցնում։ Չարագործները փախչում են։

—

Քութայիսից «Закавк.»-ին հեռագրում են, որ ռումբ է նետվել փողոցով անցնող ուսումնարանական վիճակի նահանգական տեսչի վրա և կրակել են ըէալական դպրոցի վերատեսուչ Զ. Պ. Ռօստոմովի վրա։

—

Բագւում, մարտի 17-ին, Սպիտակ քաղաքում Ռաֆայէլ Պօպօվի այդում գործադուլ անող նաւատերները մի ահագին միտինգ են ունեցել, որին ներկայ են եղել մօտ 5000 հոգի։ Ճառախօսները նկարագրել են գործադուլի ընթացքը և առաջարկել են յարաբերութիւն չը սկսել առանձին նաւատէրների հետ, այլ առաջարկել վերջիններիս ընտրել իրանց միջից պատգամաւորներ բանակցութիւն վարելու համար։ Երկար խօսել անկարելի եղաւ. ոստիկանութիւնը վերջ տուեց միտինգին։ Տրամադրութիւնից երևում է, որ մի քանի նաւատէրեր համաձայն են զիջումներ անելու, բայց, ի հարկէ, ոչ իրանց հաշւով, այլ տեղափոխութեան գները աւելացնելով։ Այդ գործադուլը, որ այդպիսի ահագին չափեր է ստացել և երկու կողմին էլ զրկանքներ է պատճառել, սակայն շատ ձեռնտու է մի քանի խոշոր նաւթարդիւնաբերողների և նաւթային ամբարների սեփականատէրերի համար, որովհետև արտահանութիւնը դադարելու պատճառով նրանք հնարաւորութիւն կունենան նաւթի գները իջեցնելու իր տեղում և բարձրացնելու այն տեղերում, ուր նրանք պէտք է տեղափոխվեն։ («К»)

—

Մարտի 16-ից, առաւօտվանից գործադուլ արին «Ռուսական նաւթի Բագւի ընկերութեան» բանւորները, թւով 433 մարդ, որոնք ներկայացրել են մի շարք պահանջներ։ Այդ պահանջները հետևեալներն են. 1) 8-ժամեայ բանուորական օր, 2) մէկ ամսվայ արձակուրդով օգտվելու իրաւունք ռոճիկով հանդերձ, 3) այս պահանջները ներկայացնելու օրից վերացնել որոշ պատուէրներով և կապալով ստացվող աշխատանքները և 4) 1906 թւի համար տալ տարեկան ռոճիկի 40%-ը։ Գործադուլի ամբողջ ժամանակի համար պէտք է տրվի ռոճիկները ամբողջովին։ Այդ պահանջները ընկերութիւնը մերժել է, որով 1906 թւի համար իբրև վարձատրութիւն առաջարկված է 15%։ («Б.»)

—

Օդեսսայից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են, որ ամենայն օր Ռումինիայից մեծ թւով փախստականներ են գալիս, որոնք ապաստանել են հրէական ջարդերից։

—

«Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը շարունակ կարևոր տեղեկութիւններ է ստանում նահանգապետներից, որոնք պահանջում են լրացուցիչ գումարներ դնել իրանց տրամադրութեան ներքոյ, որովհետև փող չը լինելու պատճառով նրանք ստիպված պէտք է լինեն կրճատելու իրանց ծառայողների կազմը։ Բանից երևում է, որ մի քանի տեղերում արդէն մի ամսից աւելի է, որ ծառայողները իրանց ռոճիկները չեն ստացել։ Նահանգապետների այդ դիմումներից դրդված ներքին գործերի մինիստրութիւնը հարկադրված է շտապեցնելու պետական ել և մուտքի հաստատումը օրէնսդրական կարգով։

—

«Бирж. Вѣд.» լրագրին հաղորդում են իբրև լուր, որ Վիբօրգի նահանգապետի հեռացումը կապ ունի Հերցենշտէյնի սպանութեան գործի հետ։ Վիբօրգի ադմինիստրացիայի ցոյց տուած անհաշտ վերաբերմունքը, որով դիւրութիւններ էին տրվում գործի քննութեան համար, ռուս ժողովրդի դաշնակցութեան, ի հարկէ, դուր գալ չէր կարող և նա պատշաճաւոր շրջաններում ազդեցիկ սկսեց անել Վիբօրգի նահանգապետի դէմ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, մարտի 13-ին

Շաբաթ օր, մարտի 10-ին, Լիլաւա թաղի Հայկազեան դպրոցի 5-րդ դասարանի աշակերտները և աշակերտուհիները նոյն դպրոցի սրահում երեկոյեան ներկայացրին «Տգիտութեան զոհեր» 5 արարուածով դրաման, որ մի անյայտ անձի փոխադրութիւն է։ Պիեսայի մէջ կար և մերժված սէր, բռնի ամուսնութիւն, պսակադրութիւն, ապահարզանի նման մի բան, և որպէս ֆինալ այդ բոլորի՝ ատրճանակ, սպանութիւն, կինը սպանեց ամուսնուն։ Միանգամայն անմիտ պիեսա, որ միանգամայն վայել չէր խաղալու դպրոցական աշակերտներին։ Կարելի է ասել, որ թէ պիեսայի հեղինակը, թէ փոխադրողը, թէ մասնակցող աշակերտները «տգիտութեան զոհեր» էին։ Մուտքը ձրի էր և սրահը լի էր հասարակութեամբ։ Սակայն աշակերտները իրանց ծախքերը դուրս բերելու համար միշտ սարքում են «բուֆէտ», ծախում են պօստ-կարտեր և այլն, և միշտ «յօգուտ դպրոցի գրադարանի» և միշտ խիստ թանգ գներով, կրկնապատիկ և եռապատիկ։ Այդ էլ մի տեսակ առևտուր է։ Վատ չէր Ղարիբի «Դաշբէնի երգը», բեմի վրա սարքած գնդանը, կրակը և այլն։

Թաւրիզի դաշնակցականները, սկսել են դասախօսութիւններ կարդալ Ղալայի ժողովարանի սրահում, մինչդեռ առաջ նրանք իրանց դասախօսութիւնները կարդում էին Լիլաւայի Արօվեան գրադարան-ընթերցարանի սրահում։ Ի դէպ է ասել, որ ներկայումս Արօվեան ընթերցարանը դադարել է խսպառ գոյութիւն ունենալուց առ ի պկոյէ բաժանորդների, անդամների։

Կիրակի երեկոյեան, մարտի 11-ին, տեղիս դաշնակցութեան լիդերներից մէկը՝ Լիլաւայի Հայկազեան դպրոցի տեսուչ՝ պ. Ն. Սարգսեան կարդաց հայկ. ժողովարանում դասախօսութիւն—«Կանանց հարցը». այդ նրա երրորդ դասախօսութիւնն էր «կանանց հարցի» մասին։ Առաջին երկուսը մենք առիթ չենք ունեցել լսելու, երրորդին ներկայ եղանք։ Ունկնդիր հասարակութիւնը բաղկացած էր գլխաւորապէս դաշնակցականներից։ Դասախօսութիւնը առանձնապէս հետաքրքրական չէր, ոչ մի նորութիւն, նոր միտք չարտայայտեց պ. դասախօսը, բոլորը սուտ և անհիմն ստատիստիկական տեղեկութիւնների վրա էր հիմնված, գլխաւորապէս Բեբելի «Կինը և սօցիալիզմը» գրքից քաղված, որ միանգամայն միակողմանի է։ Պ. դասախօսը, ըստ երևոյթին, ներկայ եղող կանանց սիրաշահելու համար, կանանց օժտեց այնպիսի գերազանց յատկութիւններով և ընդունակութիւններով, որոնցից նրանք զուրկ են, կանանց վերագրեց առաւելութիւններ, որ նրանք չունեն. իսկ տղամարդկանց միայն պակասութիւններ, թերութիւններ բաժին թողեց թէ մտաւորական և թէ ֆիզիքական տեսակէտով։ Կանանց հանճարներ դուրս բերեց, իսկ տղամարդկանց մոքով թզուկներ, կանայք հրեշտակներ, գառներ հանդիսացան դասախօսութեան մէջ, իսկ տղամարդիկ բռնակալներ, որ կաշկանդել են կանանց բոլոր իրաւունքները։ Ծայրայեղ, խիստ ձախակողմեան, սօցիալիստ երևալը ներկայումս, ըստ մօդայի, խիստ ձեռնտու է և շահաւէտ. ուրեմն ինչու այդպէս չը ձեւանալ։ Մենք խիստ կասկածում ենք, որ նէ մէկը՝ այդ դասախօսութիւնից, մանաւանդ կանանցից, գէթ չնչին օգուտ ստացած լինի։

Շաբաթ օր, մարտի 17-ին, յօգուտ Լիլաւայի Հայկազեան դպրոցի բեմի պիտի սիրողները խաղան «Անազնիւ չեն ծնվում» դրաման։ Ի մէջի այլոց պիտի նկատենք, որ յօգուտ նոյն բեմի նորոգութեան մօտերումս հանգանակութիւն է եղել մօտ 200 թումանի և հէնց այդ դրամով բեմը նորոգվել է. ուրեմն էլ ինչ ներկայացում յօգուտ բեմի։

Պիրօ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 մարտի

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 18 մարտի։ Մօլդավիայի դրութիւնը շարունակում է լաւանալ. բաւականաչափ բարելաւել է նոյնպէս Վալախիայի դրութիւնը։ Այն տեղերում, ուր զօրքերը գործել են, ապստամբները ցրված են։ Ապստամբները ցոյց են տալիս հպատակութիւն, վերադարձնում են գողացված իրերը և յանձնում են պարագլուխներին։ Ապստամբներին յարված զինուորները վերադառնում են իրանց գնդերը։

ԵԱՐՕՍԼԱՒ, 18 մարտի։ Ռուս մարդկանց դաշնակցութեան միացան Պօշէխօնսկի գաւառի 5 գիւղի բնակիչները, որի մասին կազմեցին արձանագրութիւն։

ՍՈՍՆՈՎԻՑԻ, 18 մարտի։ Երէկ երեկոյեան Խօրօմրա գիւղում 12 մարդ յարձակվել են պետական գինու պահեստի վրա, սպանել են պահապան երեք զինուորներին և գողանալով 500 րուբլի, անյայտացել են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի։ Լամզդորֆի դագաղի վրա ֆրանսիական դեսպան Բօմպարը պսակներ դրեց հանրապետութեան նախագահի, արտաքին գործերի մինիստրի և Պետերբուրգի ֆրանսիական դեսպանատան կողմից։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 19 մարտի։ Մօլդավիայից հաղորդում են, որ յուզմունքներ են երևացել Պուտնայի վիճակում։ Վալախիայում մի շարք ընդհարումներ են տեղի ունեցել զօրքերի հետ, որոնց ժամանակ սպանվել են մի քանի գիւղացիներ։ Գալիցում ձերբակալված են շարժման բոլոր պարագլուխները։ Ապստամբութիւն է ծագել Պօզօնի և Գուրէզանի համայնքներում, այնտեղ են մեկնել զօրքեր. շատ համայնքներում հանգիստ է. ձերբակալվում են առաջնորդները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 մարտի։ Ռօստով—Դօնի վրա առևտրական նաւատորմի և նաւատէրների ընկերութեան նախագահի միջնորդութեան համաձայն ամենաողորմածաբար թոյլատրված է Մեծ Իշխան Ալեքսանդր Միխայլօվիչին—ընդունել յիշեալ ընկերութեան պատուաւոր նախագահի կոչումը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մեզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներքայինն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԻՍԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներակ. և վերաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—1—2 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԴՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

„ՍՕՏՐՈՒԴՆԻԿ"
ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ
Գրավաճառանոցը
(Բագու, Օլգինսկայա № 9)
Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կօմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։
(Շ.) 14—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փողոց № 8.
(Ե. Հ. Շ.) 39—100

Լոյս տեսաւ
ԲԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ
Գիրք. Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊԷԿ
Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Աղասի 25 կ.։ 3) Ժամանակը ոսկի 40 կ.։ 4) Սրտից 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Յովհան 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գալօ աֆօ, Խաչան 12 կ.։ 8) Աստուած չը ճանաչող 10 կ.։ Շէն Թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հեքեաթներ 30 կ.։ 13) Անմեռ աշխարհ 8 կ.։ 14) Աստուած աղքատի կերպում 20 կոպէկ։
Մեծ գումարով գնողները դիմելու են Բամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց։
(Ե. Հ. Կ.) 1—20

ՍԵՆ-ՍԵՆ
Տուփը 20 կոպէկ։
Ամերիկական մաստակ և կանֆէտներ։
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
բոլոր դեղատներում և
լաւագոյն խանութներում։
Գլխաւոր պահեստն է՝ «Единственная торговля по Амѳрикански.
Միքայէլեան փող. № 96.
(Կ. Չ. Ու.) 5—10

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Գ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը {առաւ. 10—12 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(Ա. Օ.) 124—150

Ահա արդէն 2 տարի է, որ իմ 20 տարեկան որդի
Մարտիր. Տէր-Սարգսեանը
(Սալմաստի Ղըլջա գիւղի բնակիչ)
ԱՆՅԱՅՏԱՑԵԼ Է
Աղաչում եմ նրա ուր լինելու մասին տեղեկութիւն ունեցողին անմիջապէս յայտնել ինձ հետևեալ հասցէով Экзаршеская площадь контора Арзуманова։
3—3

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ
ՊՕԷՄԱՆԵՐ
Գիրք երկրորդ
Գինն է 40 կոպ.
Դիմել՝ հայ գրավաճառներին կամ Ալեքսանդրօպոլ՝ հեղինակին։
3—8

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՅՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլօվսկի պր. տ. Ճալվճարեանի № 36
90—100

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ
(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում		
Պօստատար	1 ժամ 24 ր.	ցերեկվայ
Մարդատար	8 » 5 »	առաւօտեան
»	11 » 8 »	գիշերվայ
Թիֆլիսից դէպի Բագու		
Մարդատար	9 ժամ 13 ր.	առաւօտ.
Պօստատար	7 » 48 »	երեկոյեան
Մարդ-ապրանք.	11 » 38 »	»
Թիֆլիսից դէպի Երևան		
Պօստատար	12 ժամ 40 ր.	գիշերվայ

XXV ԱՂԲԻՒՐ XXV
և
XVIII ՏԱՐԱԶ-ԳԵՂԱՓՆԶԻԿ
Հրատարակվում են ճոխ և բազմաբովանդակ։ Աշխատակցում են մեր անուանի մատենագիրներ, բանաստեղծներ, մանկավարժներ, արուեստագէտներ և լրագրողներ։ Կլիշէները պատկերների պատրաստվում են Եւրոպայի նշանաւոր գործարաններում։ «ԱՂԲԻՒՐԸ» և «ՏԱՐԱԶ»,-«ԳԵՂԱՓՆԶԻԿԸ» տպագրվում են ընտիր թղթի վրա, իլլիւստրասիօնի մուրով, նորագոյն տառերով, զարդերով ու իրանց թանգագին յաւելուածներով, անհամեմատ պրեմիաներով, տարեկան 5 ր. բաժանորդագնով, (արտասահման 10 րուբլի). Հրապարակի վրա չունեն մրցակից։
Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ» Tiflis, Redaction «Agbür» կամ «Taraz»։ Չ. Ու. Կ. 1—15

Վաճառվում են
ՅԱՐ. ԽՍԱՅԵԱՆԻ
ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ
Պատկեր հայ-Թուրքական կռիւներից, գինը 7 կ.
Միևնոյն դաշտում
Պատկեր հայ-Թուրքական, կռիւներից պատկերազարդ, գինը 7 կոպ. Նոյն հեղինակի միւս բոլոր աշխատասիրութիւնները կարելի է ստանալ՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցից կամ հեղինակից, Թիֆլիս 5 уч. Могнинская ул. № 7։
Շուտով լոյս կը տեսնի «Միշտական զօրք և միլիցիա» Պիմէնովի։ օրմ. 4—5

Մի երիտասարդ,
որը ծանրաբեռնված է 13 հոգուց բաղկացած ընտանիքով և չունի ոչ մի նիւթական միջոց, գոնէ չոր հաց հայթայթելու, որոնում է գործ. գիտէ ռուսերէն և հայերէն մաքուր. կարող է մտնել իբրև գործակատար։
Հարցնել՝ Հաւլաբար, Կախեթինսկի հրապարակ, Արօվեանների գիլիժանների դրասենակը։ 3—3

Պ. Եա. Ալաարգիսովի
ՏՆԿԱՐԱՆԸ
բաց է Թողնում արտասահմանի, Ռուսաստանի և տեղական տեսակի
պտղատու ծառեր
Եժանացրած գներով
Ст. Скра зак. ж. дор. Авсаркисову. Կատալօգները ուղարկվում են ձրի։
(Հ.) 7—10

Խնդրում եմ յարգելի հասարակութեան յանձն առնել ձրիապէս պատրաստել, կամ պատրաստել տալ իմ 10 տարեկան որդուս Ներսիսեան դպրոցի համար ինքս մնալով անգործ հնարաւորութիւն չունեմ վճարել։ Որոնում եմ նաև որևէ պաշտօն խանութներում կամ որևէ հիմնարկութիւններում։ Դիմել «Մշակի» խմբագրութեան։ 4—5

Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնող ընկերութեան վարչութիւնը
հրաւիրում է ընկերութեան անդամներին գալ քաղաքային դումայի դահլիճը
հինգշաբթի, մարտի 22-ին,
երեկոյեան 7 ժամին քաղաքային վարչութեան կողմից նշանակված Թիֆլիսի առևտրա-արդիւնաբերական ձեռնարկութիւնների ծառայողների
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
ուր մինիստրների խորհրդի 1906 թ. 15 նոյեմբերի հաստատված որոշման համաձայն պիտի 6 ներկայացուցիչ ընտրեն յիշեալ ձեռնարկութիւնների ծառայողների նորմալ հանգստի վերաբերեալ պարտադիր որոշումներ մշակող յանձնաժողովի համար։
(Չ. Հ.) 1—2

„ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ"
Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
Ձեռնարկ մայրերի եւ դաստիարակչուհիների համար
ՆՕՏԱՆԵՐՈՎ ԵՒ ՆԿԱՐՆԵՐՈՎ
ԳԻՆՆ Է 3 ՐՈՒԲԼԻ
Ուսուցչուհիներին և ուսուցիչներին՝ 1 ր. 80 կ.
Տասն օրինակից աւել գնող գաւառական գրավաճառներին մեծ զիջում։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Михайловская ул. № 138։ օրմէջ 3—10

Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
լոյս տեսաւ
պատկերազարդ, եռամսեայ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
1907 թ. № 1. (XV գիրք)
Բովանդակութիւն. Հայ ժողովրդական վէպը՝ Մ. Աբեղեանի. Համուրաբիի օրէնսգիրքը Լ. Բաբայեանի. Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի՝ Կ. Կոստանեանի. Հայոց ժառանգական իրաւունքը՝ Խ. Սամուէլեանի. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ (առանձնապէս Զուարթնոց եկեղեցին) Մեսրոպ վարդապետի. Նախիջևանի ոստիկանական շրջան՝ Ե. Լալայեանի. Նոր-Բայազէտի գաւառ (պեղումներ) Ե. Լալայեանի. Մի դրօշ. Մատենախօսութիւն. Քաղուածք հայոց Ազգագրական ընկերութեան արձանագրութիւններից։
Գիրքը զարդարված է 25 պատկերներով
Տարեկան բաժանորդագինն է 5 ր, մի գիրքը 1 50 կ. № 2 լոյս կը տեսնի մայիսին։
Դիմել՝ Въ редакцію журнала «Азгагракан андесъ», Тифлисъ. 8—10

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5.